

ԹԵՂՈՒՏ ԵՎ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Թեղուտ» ՓԲԸ-ին

Մշակվել է «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ կողմից

Նախաբան

1. Ուսումնասիրության շրջանակ

Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրը գտնվում է Լոռու մարզի Թումանյանի շրջանում: Հանքավայրի շահագործման տարածքն ըստ շահագործման նախագծի գտնվում է Թեղուտ և Շնող համայնքներից համապատասխանաբար 4 և 6 կմ հեռավորության վրա:

«Թեղուտ և Շնող համայնքների բնակչության սոցիալական և առողջապահական ուսումնասիրության» (այսուհետ՝ Ուսումնասիրություն) նպատակներն են՝

1. Հավաքել և գնահատել Թեղուտ և Շնող համայնքներում (այսուհետ՝ թիրախային համայնքներ) ընդհանուր բնակչության սոցիալական և առողջապահական պայմանների վերաբերյալ առաջնային և երկրորդային տվյալներ, որոնք Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի՝ թիրախային համայնքների վրա ազդեցության և ռիսկերի չեզոքացմանն ուղղված միջոցառումների մշակման դիտանցման համար հենակետ կծառայեն:
2. Ապահովել թիրախային համայնքների շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը տվյալների հավաքագրման գործընթացում՝ տեղական առկա տեղեկատվությունը և վերոնշյալ կողմերի տեսակետները ներկա իրավիճակի համար հասանելի դարձնելու համար, ինչպես նաև ապահովել, որպեսզի վերոնշյալ կողմերը հստակ պատկերացում ունենան գնահատման նպատակի վերաբերյալ:

2. Պատասխանատվության սահմանափակում

Ուսումնասիրությունը կատարվել է «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Հեղինակներ) կողմից: Ուսումնասիրության մեջ գործածված տեղեկատվությունը ստացվել է պետական, ինչպես նաև թիրախային համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններից, «Թեղուտ» ՓԲԸ-ից և թիրախային համայնքների բնակչությունից: Ուսումնասիրության հեղինակները պատասխանատվություն չեն կրում տրամադրված տեղեկատվության ամբողջականության, ճշգրտության և հավաստիության համար:

3. Ուսումնասիրության օգտագործման սահմանափակումները

Ուսումնասիրության պատվիրատուն «Թեղուտ» ՓԲԸ-ն է (այսուհետ՝ Պատվիրատու): Ուսումնասիրությունը չպետք է որևէ նպատակով որևէ տեղ հրապարակվի առանց Պատվիրատուի համաձայնության: Ուսումնասիրությունից մեջբերումներ կատարելիս կամ դրա տեղեկությունները գործածելիս պարտադիր է հղում կատարել Ուսումնասիրությանը:

Հեղինակները պատասխանատվություն չեն կրում Ուսումնասիրության օգտագործումից առաջացած հետևանքների համար:

Բովանդակություն

| | |
|--|----|
| Նախաբան | 2 |
| Ամփոփագիր | 4 |
| ՄԱՍ I. Սոցիալական հեռակետային ցուցանիշներ..... | 11 |
| 1. Ժողովրդագրական տեղեկություններ | 11 |
| 2. Գյուղատնտեսություն | 17 |
| 3. Չբաղվածություն | 21 |
| 4. Կյանքի որակ | 34 |
| 5. Կրթություն..... | 47 |
| 6. Մշակույթ, սպորտ, հանգիստ և ժամանց..... | 50 |
| 7. Տրանսպորտ..... | 52 |
| 8. Հանցավորության մակարդակ | 53 |
| ՄԱՍ II. Առողջապահական հեռակետային ցուցանիշներ | 54 |
| 9. Առողջապահություն | 54 |
| 10. Ջրի և օդի որակ, ֆիզիկական ազդեցության աղբյուրներ և աղբի կառավարում | 62 |
| Հավելվածներ..... | 66 |
| Հավելված I. Մեթոդաբանական մոտեցում | 66 |
| Հավելված II. Ուսումնասիրության մեջ գործածված տեղեկությունների աղբյուրներ | 68 |
| Հավելված III. Համայնքների գյուղական կանանց խորհուրդներ | 69 |

Ամփոփագիր

ՄԱՍ I. Սոցիալական հենակետային ցուցանիշներ

1. Ժողովրդագրական տեղեկություններ

Բնակչության թվաքանակ

Թեղուտ և Շնող համայնքներում 2012թ. դրությամբ գրանցված է եղել համապատասխանաբար 790 և 3,297 մարդ: Փաստացի բնակվող բնակչության թվաքանակը 2012թ.-ին թեղուտում գերազանցել է գրանցված բնակչությանը՝ կազմելով 875 մարդ, իսկ Շնողում հակառակ պատկերն է՝ փաստացի բնակվող 3,127 մարդ, որն ավելի ցածր է, քան գրանցված բնակչության թվաքանակը: 2012թ.-ին 2010թ. համեմատ փաստացի բնակչությունը թեղուտում աճ է արձանագրել (1.3%), իսկ Շնողում՝ նվազում (0.4%): Երկու համայնքերում էլ անչափահաս բնակիչները կազմում են փաստացի բնակվող բնակչության շուրջ մեկ հինգերորդը, իսկ կենսաթոշակառուների կշիռը համեմատաբար ավելի բարձր է Շնողում (17%՝ համեմատած թեղուտի 13%-ի հետ): Համայնքներում տնային տնտեսությունների (SS) ամենահաճախ հանդիպող չափը բաղկացած է 4-5 մարդուց:

Ծնելիություն և մահացություն

2012թ.-ին ծնելիության մակարդակը ավելի բարձր է եղել թեղուտում (17.1 ծնված փաստացի 1,000 բնակչի հաշվով՝ համեմատած Շնողի 11.5 ցուցանիշի հետ): 2012թ.-ին 2010թ. համեմատությամբ մահացության մակարդակը (փաստացի 1,000 բնակչի հաշվով) երկու համայնքներում էլ նվազել է, ընդ որում՝ թեղուտում շատ ավելի նկատելիորեն (12.2% նվազում՝ համեմատած 3.3% նվազման հետ Շնողում):

Արտագաղթ

Վերջին տարիներին թեղուտից և Շնողից պարբերաբար արտագնա աշխատանքի են մեկնել տնային տնտեսությունների մոտ 4.5%-ից: 2013թ.-ին արտագնա աշխատանքի ծրագիր ունեցող տնային տնտեսությունների կշիռը նախորդ տարիների հետ համեմատած մոտ 1.5 տոկոսային կետով նվազել է: Վերոնշյալ արտագաղթը հիմնականում պայմանավորված է համայնքներում աշխատանքի բացակայությամբ: Ըստ գյուղապետարանների տվյալների¹, 2010-2012թթ. թեղուտից ամբողջ կազմով մշտական արտագաղթած տնային տնտեսություններ հիմնականում չեն գրանցվել, իսկ Շնողից եղել են 3 SS (մոտ 12-15 մարդ): 2006-2009թթ. ևս թեղուտից ամբողջ կազմով մշտական արտագաղթած տնային տնտեսություններ հիմնականում չեն եղել, իսկ Շնողից դրանց քանակը կազմել է մոտ 6-7 (մոտ 25-30 մարդ):

2. Գյուղատնտեսություն

Հողատարածքներ

Շնողի գյուղատնտեսական նշանակության հողատարածքների մեջ գերակշռում է վարելահողը և արոտը, իսկ թեղուտում՝ արոտը: Երկու համայնքներում էլ համայնքին պատկանող ռեզերվային հողատարածքները գերազանցում են տնային տնտեսություններին պատկանող

¹ Սույն գնահատականը հիմնված է գյուղապետարաններում առկա տեղեկատվության վրա, որը կարող է ամբողջական չլինել:

հողատարածքներին: ՏՏ պատկանող հողատարածքները թեղուտում ամբողջապես բաղկացած են տնամերձ հողերից (հիմնականում բազմամյա տնկարկ), իսկ Շնողում գերակշռում են վարելահողը և խոտհարքը: Թեղուտում ցանքատարածությունները հիմնականում օգտագործվում են այգեգործության նպատակով, իսկ Շնողում՝ հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերի աճեցման: Թեղուտում 2012թ.-ին մշակվել է տնային տնտեսություններին պատկանող բազմամյա տնկարկների, վարելահողերի և այլ տնամերձ հողատարածքների շուրջ 77%-ը (մոտ 41 հա), իսկ Շնողում՝ 60%-ը (մոտ 247 հա):

Գյուղատնտեսական արտադրություն և անասնապահություն

Երկու համայնքներում էլ 2012թ.-ին 2011թ. համեմատ գյուղատնտեսական բոլոր արտադրատեսակների ծավալներն աճել են, բացի ձվի արտադրությունից Շնողում:

2010-2012թթ. երկու համայնքներում էլ անասնապահությունը տնային տնտեսությունների շրջանում ավելի լայն տարածում է ստացել. 2012թ.-ին թեղուտում անասուն կամ թռչուն են պահել ՏՏ 69%-ը (53% 2010թ.-ին), իսկ Շնողում՝ 41%-ը (29% 2010թ.-ին): Թեղուտում անասունների շարքում գերակշռում են ոչխարներն ու այծերը, իսկ Շնողում՝ կովերը: 2010թ. համեմատ 2012թ.-ին թեղուտում անասունների բոլոր տեսակները քանակապես աճ են արձանագրել, իսկ Շնողում մոտ մեկ քառորդով նվազել է ոչխարների և այծերի գլխաքանակը:

3. Զբաղվածություն

Ընդհանուր նկարագիր

Աշխատավարձով վարձու աշխատանք ունեցող և կանայք և տղամարդիկ աշխատանքային ռեսուրսների մեջ ավելի շատ են թեղուտում (համապատասխանաբար 27% և 49%), քան Շնողում (17% և 35%): Մյուս կողմից՝ Շնողում համեմատաբար ավելի բարձր է սեփական բիզնես¹ ունեցողների կշիռը, թեև երկու համայնքներում էլ աշխատանքային ռեսուրսների մեջ այն զգալի կշիռ չի կազմում (մինչև 2%):

Թեղուտում կին գործազուրկների ամենախոշոր խումբը 15-24 տարեկաններին է (41%), իսկ տղամարդկանցը՝ 25-34 տարեկան խումբը (37%): Շնողում կին գործազուրկների գերակշռող խումբը 25-34 տարեկանն է, իսկ տղամարդկանց շրջանում նույնն է՝ ինչ թեղուտում՝ 25-34 տարեկան:

Երկու համայնքներից էլ կանայք ամենաշատն աշխատում են սպասարկման (ծառայությունների) ոլորտում: Թեղուտում տղամարդիկ ամենաշատը ներգրավված են հանքագործական արդյունաբերության աշխատանքներում, իսկ Շնողում՝ շինարարական:

«Թեղուտ» ՓԲԸ

«Թեղուտ» ՓԲԸ-ն թիրախային համայնքներում գտնվող միակ արդյունաբերական ձեռնարկությունն է և խոշորագույն գործատուն: Այն հիմնական աշխատավայր է հանդիսանում Թեղուտ համայնքի աշխատավարձով վարձու աշխատանք ունեցող տղամարդկանց 82%-ի և կանանց՝ 49%-ի համար: Շնող համայնքի աշխատավարձով վարձու աշխատանք ունեցող տղամարդկանց 60%-ի հիմնական աշխատավայրը ևս հանդիսանում է «Թեղուտ» ՓԲԸ-ն:

¹ Ոչ սեփական ընտանիքի գյուղատնտեսական աշխատանքները:

«Թեղուտ» ՓԲԸ-ում 2012թ.-ին Թեղուտի բնակիչներից աշխատել է 148 մարդ, իսկ Շնողից՝ ավելի շատ՝ 214: Թեղուտի տնային տնտեսությունների երկու երրորդի շրջանում SS գոնե մեկ անդամ հանդիսանում է «Թեղուտ» ՓԲԸ-ի աշխատակից: Շնողում տնային տնտեսությունների ավելի փոքր խմբի (31%) շրջանում են առկա «Թեղուտ» ՓԲԸ-ի աշխատակիցներ:

2012թ.-ին 2010թ. համեմատ «Թեղուտ» ՓԲԸ-ում թիրախային համայնքներից աշխատակիցների քանակը նկատելի աճ է ունեցել: Թեղուտից կին աշխատակիցների քանակը աճել է 94%-ով, իսկ տղամարդկանցը՝ 16%-ով: Նույն ժամանակահատվածում Շնողից տղամարդ աշխատակիցների քանակն աճել է 46%-ով և աշխատանքի են անցել նաև կանայք (2010թ.-ին «Թեղուտ» ՓԲԸ-ում Շնողից կին աշխատակից չի եղել):

«Թեղուտ» ՓԲԸ-ում Շնողից կին աշխատակիցների միջին ամսական զուտ աշխատավարձը 2012թ.-ին կազմել է մոտ 99,000 դրամ, իսկ Թեղուտից կին աշխատակիցներինը՝ մոտ 54,000 դրամ: Տղամարդ աշխատակիցների միջին ամսական աշխատավարձը համեմատաբար ավելի բարձր է, իսկ աշխատավարձի միջին չափը ըստ համայնքների՝ գրեթե միանման. Շնողից տղամարդ աշխատակիցների միջին ամսական զուտ աշխատավարձը 2012թ.-ին կազմել է մոտ 131,000 դրամ, իսկ Թեղուտ համայնքից աշխատակիցներինը՝ մոտ 132,000 դրամ: Ընդհանուր առմամբ, և Թեղուտում, և Շնողում, ամսական 91,000 դրամ և բարձր աշխատավարձ ստացող բնակիչների բացարձակ մեծամասնությունը «Թեղուտ» ՓԲԸ-ի աշխատակիցներն են:

2012թ.-ին 2010թ. համեմատ «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից Թեղուտի և Շնողի համայնքային բյուջե պարտադիր վճարումները դրամական ծավալներով զգալի աճ են արձանագրել՝ համապատասխանաբար շուրջ 1,800% և 920%, կազմելով համապատասխանաբար 15.17 մլն և 26.61 մլն դրամ: Հիմնական վճարը գոյացել է հողի վարձակալությունից: «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից թիրախային համայնքների բյուջե վճարները համայնքների բյուջետային եկամուտների մեջ նշանակալից դեր ունեն: 2012թ.-ին վերոնշյալ վճարները Թեղուտ համայնքի բյուջետային ընդամենը եկամուտների մեջ կազմել են 57% (7%՝ 2010թ.-ին): Շնողի պարագայում դրանք համեմատաբար ավելի ցածր կշիռ են ունեցել՝ 37% (2010թ.-ին կազմել է 5%¹):

4. Կյանքի որակ

Կանխիկ եկամուտ

2 համայնքներում էլ կանխիկ եկամտի ամենատարածված աղբյուրն² աշխատավարձն է (Թեղուտում համեմատաբար ավելի շատ՝ տնային տնտեսությունների 84%-ի շրջանում, Շնողում՝ 61%-ի): Շնողում միջին ամսական կանխիկ եկամտի ամենատարածված միջակայքը 36-70 հազ. դրամն է, իսկ Թեղուտում՝ 36-70 և 71-110 հազ. դրամը:

Գյուղատնտեսական աշխատանքներ

Եվ Թեղուտում, և Շնողում հարցված SS բացարձակ մեծամասնության համար գյուղատնտեսական աշխատանքները եկամտի հիմնական աղբյուր չեն հանդիսանում: Թեղուտում հողագործությունը եկամտի հիմնական աղբյուր է SS 2.8%-ի համար, իսկ անասնապահությունը՝ 4.8%-ի: Վերոնշյալ ցուցանիշները Շնողում համապատասխանաբար 1.6% և 3.6% են: Թեղուտում գյուղատնտեսական աշխատանքով զբաղվող տնային

¹ Հաշվարկված կշիռները չեն ընդգրկում «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից համայնքներին հատկացված այլ գումարները (պարտադիր վճարներից բացի)՝ համայնքների զարգացման նպատակով:

² Ընտանիքի գյուղատնտեսական աշխատանքների հետ կապ չունեցող:

տնտեսությունների շրջանում ամենատարածվածը անասնապահությունն է (SS 54%-ի շրջանում), իսկ Շնողում՝ հողագործությունը (41%): Թեղուտում ամենատարածված գյուղատնտեսական արտադրությունը ձվինն է՝ SS 32%, իսկ Շնողում՝ մրգի և հատապտղի՝ 30%: Շնողում գյուղատնտեսական աշխատանքներով ընդհանրապես չեն զբաղվում տնային տնտեսությունների 38%-ը, որը կրկնակի գերազանցում է Թեղուտի ցուցանիշին: Եվ Թեղուտում, և Շնողում SS բացարձակ մեծամասնության համար գյուղատնտեսական աշխատանքները եկամտի հիմնական աղբյուր չեն հանդիսանում:

Թեղուտ և Շնող համայնքներից «Թեղուտ» ՓԲԸ-ն կատարում է գյուղմթերքի (հիմնականում՝ պանիր, միս, բանջարեղեն), շինանյութերի և տնտեսական ապրանքների գնումներ: 2012թ.-ին տնային տնտեսությունների քանակում ամենամեծ դիվերսիֆիկացիան առկա է մսի գնման մեջ՝ 21 SS երկու համայնքներից: 2010թ. համեմատ 2012թ.-ին «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից համայնքներից պանրի գնման բնեղեն ծավալները կրճատվել են մոտ 50%-ով (5.3 տ-ից՝ 2.7տ), մյուս կողմից՝ մսի գնման ծավալները շուրջ 12-ապատիկ աճ են արձանագրել (0.4 տ-ից՝ 5.7տ):

Բնակիչները անտառի բարիքներից ամենաշատը հավաքում են փայտ, ընդ որում Թեղուտի տնային տնտեսությունների շրջանում սա կրկնակի ավելի տարածված է, քան՝ Շնողի (համապատասխանաբար 38% և 19%):

Սպառողական հիմնական ծախսեր

Եվ Թեղուտում, և Շնողում սպառողական հիմնական ծախսերի առաջնային եռյակում են սնունդը, հագուստը և առողջապահությունը՝ միասին դրանք կազմում են տնային տնտեսությունների սպառողական ընդհանուր ծախսերի միջինում 60%-70%-ը: 2 համայնքներում էլ հենց այս ծախսերը ոչ լիարժեք կատարվող ծախսերի առումով առաջին տեղերում են:

Բնակֆոնդ և բնակարանային պայմաններ

Թեղուտում բնակելի տների քանակը (ներառյալ չբնակեցված տները) 174-ն է՝ 16,854 քմ ընդամենը մակերեսով, իսկ Շնողում՝ դրանց քանակը 801-ն է՝ 48,477 քմ ընդամենը մակերեսով: 2010-2012թթ. երկու համայնքներում էլ բնակելի տների քանակը և ընդամենը բնակֆոնդի չափը չի փոփոխվել: 2012թ.-ին մեկ բնակչի հաշվով բնակմակերեսը Թեղուտում կազմել է 21 քմ, իսկ Շնողում շատ ավելի քիչ՝ 15 քմ:

Թեղուտում բնակելի տները գազաֆիկացված չեն, իսկ Շնողում՝ գազաֆիկացված է տների շուրջ երկու երրորդը: 2 համայնքներում էլ բնակելի տներն ամբողջությամբ էլեկտրաֆիկացված են: Եվ Թեղուտում, և Շնողում տների մեծամասնությունը՝ շուրջ 90%, ջրամատակարարվում է: Համայնքներում բնակելի տների կոյուղու համակարգ չկա:

Ընդհանուր կենսամակարդակ

Եվ Թեղուտում, և Շնողում հարցված տնային տնտեսությունների մեծամասնությունն իրենց ընդհանուր կենսամակարդակը միջին են համարում (համապատասխանաբար՝ SS 68% և 61%): Իրենց աղքատ համարող տնային տնտեսությունների հատվածն ավելի մեծ կշիռ ունի Շնողում՝ 11%, համեմատած Թեղուտի 5% կազմող տնային տնտեսությունների հետ:

5. Կրթություն

Ընդհանուր նկարագիր

Եվ Թեղուտում, և Շնողում 25 տարեկանից բարձր բնակչության կրթական մակարդակը նույնանման բաշխում ունի. բարձրագույն, նախամասնագիտական, միջին մասնագիտական կամ թերի բարձրագույն կրթություն ունեցող բնակչության կշիռը կազմում է մոտ 40%:

Թեղուտ և Շնող համայնքներում յուրաքանչյուրում գործում է մեկական մանկապարտեզ և դպրոց: Եվ Շնողում, և Թեղուտում դպրոցահասակ բոլոր երեխաները հաճախում են դպրոց: 2012թ.-ին բուհ է ընդունվել Շնողի դպրոցի շրջանավարտների 36%-ը (12 հոգի, որոնցից 7-ը՝ աղջիկ)՝ հիմնականում մանկավարժության ուղղությամբ, իսկ Թեղուտից նույն ժամանակահատվածում բուհ ընդունվողներ չեն եղել:

Յետդպրոցական կրթության և կարիերայի պլաններ

Եվ Թեղուտում, և Շնողում դպրոցականների հետագա կրթություն ստանալու ծրագրերը բավական տարածված են. Թեղուտի և Շնողի 15 տարեկանից բարձր աշակերտների համապատասխանաբար 87%-ը և 73%-ը բուհ ընդունվելու ծրագրեր ունեն: Ներկայումս բուհերում սովորող Թեղուտից ուսանողների մոտ երկու երրորդը պլանավորում է վերադառնալ հայրենի գյուղ և աշխատել «Թեղուտ» ՓԲԸ-ում: Նմանատիպ ցանկությունը ավելի քիչ է տարածված շնողի ուսանողների շրջանում՝ 29%:

6. Մշակույթ, սպորտ, հանգիստ և ժամանց

Համայնքներում մշակութային կյանքն ակտիվությամբ առանձնապես աչքի չի ընկնում: Եվ Թեղուտում, և Շնողում գործում է մշակույթի տուն, Շնողում կա նաև արվեստի դպրոց:

Համայնքներում սպորտային խմբակներ չեն գործում և սպորտով զբաղվելու հնարավորություններ քիչ կան: Համայնքներից սակավաթիվ մանուկներ և պատանիներ հաճախում են Ալավերդիում գործող մի քանի խմբակներ (օրինակ՝ արևելյան մարտաձևեր):

Սեփական և մերձակա համայնքներում սպորտի, մշակույթի, հանգստի և ժամանցի հնարավորությունների շարքում և Թեղուտի, և Շնողի բնակիչները ամենաշատը նախընտրում են ունենալ երգի կամ պարի խմբեր, սպորտային ակումբներ և լողավազան:

7. Տրանսպորտ

Թեղուտի և Շնողի և տարածաշրջանի մերձակա հիմնական խոշոր բնակավայրերի (մասնավորապես՝ Ալավերդի և Վանաձոր), ինչպես նաև Երևանի միջև իրականացվում են կանոնավոր ուղևորափոխադրումներ: Համայնքներին սպասարկում են մարդատար և երթուղային տաքսիներ, միկրոավտոբուսներ և ավտոբուս:

2010-2012թթ. Շնողում գրանցվել է 2, իսկ Թեղուտում՝ 1 ճանապարհատրանսպորտային պատահար, որոնք մահացու ելք չեն ունեցել:

Երկու համայնքներում էլ բնակիչներն ամբողջապես կամ հիմնականում բավարարված են իրենց համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի երթուղիների առկայությունից, տրանսպորտի հաճախականությունից և գնից:

8. Հանցավորության մակարդակ

Գրանցված ընդամենը հանցագործությունների քանակը թեղուտում 2010-2012թթ. աճել է 2-ից մինչև 6, իսկ Շնողում՝ 4-ից 7: Նշված ժամանակահատվածում թեղուտում և Շնողում ծանր կամ անչափահասների կամ կանանց կողմից կատարված հանցագործություններ չեն արձանագրվել:

ՄԱՍ II. Առողջապահական հենակետային ցուցանիշներ

9. Առողջապահություն

Տեղական առողջապահական հաստատություններ

Շնողում գործում է Շնողի բժշկական ամբուլատորիան, իսկ թեղուտում՝ բուժկայան, որոնք սպասարկում են բնակիչների առողջապահական համեմատաբար թեթև խնդիրները: Առողջապահական միջին և ծանր կարիքները հիմնականում սպասարկվում են Ալավերդու, մասամբ՝ նաև՝ Նոյեմբերյանի հիվանդանոցների կողմից:

Բնակիչների շրջանում տարածված հիվանդություններ

2012թ.-ին թեղուտի անչափահաս բնակիչների շրջանում առկա է եղել 160 հիվանդության դեպք, իսկ Շնողի անչափահաս բնակիչների շրջանում՝ 440: Երկու համայնքներում էլ գերակշռել են շնչառական օրգանների հիվանդությունները՝ դեպքերի ավելի քան երեք քառորդը:

2012թ.-ին թեղուտի չափահաս բնակիչների շրջանում առկա է եղել հիվանդության 245 դեպք, իսկ Շնողի չափահաս բնակիչների շրջանում՝ 1,180: Կանանց շրջանում գերակշռել են արյան շրջանառության համակարգի, իսկ տղամարդկանց շրջանում՝ շնչառական օրգանների հիվանդությունները:

Բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդություններ

2012թ.-ին երկու համայնքներում էլ անչափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների շարքում գերակշռում են շնչառական օրգանների հիվանդությունները՝ ավելի քան 70%-ը: 2010-2012թթ. Շնողում անչափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների քանակն աճել է 20%-ով՝ 350-ից հասնելով 421-ի, իսկ թեղուտում այն ավելի քան կրկնապատկվել է՝ 72-ից հասնելով 150-ի:

2012թ.-ին համայնքներում չափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների շարքում (ինչպես անչափահաս բնակիչների շրջանում) գերակշռում են շնչառական օրգանների հիվանդությունները: 2010-2012թթ. և թեղուտում և Շնողում չափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների քանակն աճել է 10%-ով:

Ընդհանուր նկատառումներ

Ըստ Շնողի բժշկական ամբուլատորիայի՝ վերջին 3 տարիներին համայնքներում գրանցված հիվանդությունների աճին որոշակիորեն նպաստել են բնակիչների ավելի հաճախակի բժշկական ստուգումների ենթարկվելը և «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության հետևանքները (օրինակ՝ կատարվող աշխատանքների հետևանքով փոշու ծավալները և ընկերությունում աշխատող

տարածաշրջանի այլ համայնքներից ներգնա աշխատուժի գործունը, որն իր հետ կարող է բերել նոր վարակներ):

Երկու համայնքներում էլ բնակիչների մեծամասնությունը ամբողջապես կամ հիմնականում բավարարված է իրենց համայնքներին տեղական առողջապահական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների գնից, ծառայությունների հասանելիությունից և որակից:

10. Ջրի և օդի որակ, ֆիզիկական ազդեցության աղբյուրներ և աղբի կառավարում

Ջրի որակ

Եվ Թեղուտի, և Շնողի ներտնային ջրամատակարարման աղբյուրը մոտակա գետերն են, որոնցից վերցված ջուրը չի ֆիլտրվում: Թեղուտի խմելու ջրի նմուշներում արձանագրված շեղումները հիմնականում մանրէաբանական են (7 դեպք 2012թ.-ին), որը հետևանք է չվարակագերծվող ջրամատակարարման համակարգի: Շնողում ևս հիմնական շեղումները մանրէաբանական են (51 դեպք 2012թ.-ին):

Օդի որակ

Ներկայումս Թեղուտ և Շնող համայնքներում Թեղուտի հանքավայրին առնչվող աշխատանքների արդյունքում արտանետվող հիմնական աղտոտող նյութերն անօրգանական են (անօրգանական փոշի): Աղտոտման հիմնական աղբյուրներն են բեռնատար ավտոմեքենաները և խճի ջարդման արտադրամասը:

Ֆիզիկական ազդեցության աղբյուրներ

Ըստ Թեղուտի հանքավայրի տարածքում և Թեղուտ և Շնող համայնքներում իրականացված ռադիոչափումների՝ արձակված γ -ճառագայթների առավելագույն էքսպոզիցիոն չափաբանակը մթնոլորտում կազմել է 0.08 մկՉվ/ժամ, իսկ հողի մակերեսին՝ 0.16 մկՉվտ/ժամ: Դրանք փոքր են ֆոնային արժեքից՝ 0.2 մկՉվ/ժամ (20 մկՌ/ժամ), իսկ թուլյատրելի մակարդակ է համարվում 0.2-0.6 մկՉվ/ժամը:

Աղբի կառավարում

2013թ. ապրիլից սկսած՝ «Թեղուտ» ՓԲԸ-ն պատրաստակամություն է հայտնել համայնքներին տրամադրել օժանդակություն կենցաղային աղբահանության կազմակերպման նպատակով (վերջինս նախկինում համայնքներում չի իրականացվել): «Թեղուտ» ՓԲԸ-ի ներկայիս գործունեության արդյունքում առաջանում է 2 տեսակի աղբ՝ կենցաղային աղբ և արտադրական թափոններ, որոնք հեռացվում են աղբահանության միջոցով կամ կուտակվում են հատուկ նշանակության վայրերում:

ՄԱՍ I. Սոցիալական հենակետային ցուցանիշներ

Ուսումնասիրությունում ներկայացված առաջնային աղբյուրներից (Թեղուտ և Շնող համայնքների բնակչության հարցում¹ և հարցազրույցներ համայնքների շահառուների հետ, տե՛ս Հավելված II) ստացված տեղեկությունները հիմնականում վերաբերում են 2013 թվականին, իսկ երկրորդային աղբյուրների (տե՛ս Հավելված II) տրամադրած տեղեկությունները՝ 2010-2012 թվականներին, եթե այլ կերպ նշված չէ²:

1. Ժողովրդագրական տեղեկություններ

Գրանցված բնակչության քանակ

Ըստ գյուղապետարանների³՝ Թեղուտ և Շնող համայնքներում 2012թ. դրությամբ գրանցված է եղել 4,087 մարդ: Համայնքների գրանցված բնակչությունը 2010-2012թթ. աճել է տարեկան միջինում 2%-ով և 3.1%-ով՝ Թեղուտում և Շնողում համապատասխանաբար:

Աղյուսակ 1.1. Գրանցված բնակչության քանակ, 2012

| Քանակ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|-----------------------|--------|-------|----------------------|
| Գրանցված բնակչություն | 790 | 3,297 | 4,087 |

Աղբյուր՝ գյուղապետարաններ

Փաստացի բնակչության քանակ

2012թ.-ին 2010թ. համեմատ փաստացի բնակչությունը Թեղուտում աճել է 1.3%-ով, իսկ Շնողում նվազել է 0.4%-ով (ըստ գյուղապետարանների տրամադրած տվյալների): Երկու համայնքներում էլ 2010թ. համեմատ 2012թ.-ին տղամարդկանց թվաքանակն աճել է, իսկ կանանցը՝ նվազել:

Աղյուսակ 1.2. Փաստացի բնակչության քանակ, 2012

| Քանակ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|---|--------|-------|----------------------|
| Փաստացի բնակչություն (գյուղապետարանների տվյալներ) | 875 | 3,127 | 4,002 |
| Փաստացի բնակչություն («Մարդահամար 2011»-ի տվյալներ) | 649 | 2,485 | 3,134 |

Աղբյուրներ՝ գյուղապետարաններ, «Մարդահամար 2011» (ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2011թ. հոկտեմբերի դրությամբ)

¹ Հարցման մեթոդաբանական մոտեցման համար տե՛ս Հավելված I.1:

² Ուսումնասիրության ընթացքում հավաքագրված հենակետային տվյալները և ցուցանիշները ամբողջությամբ առկա են տվյալների առանձին Excel բազայում:

³ Այսուհետ՝ սույն ուսումնասիրությունում գյուղապետարաններին հղումները վերաբերում են Թեղուտ և Շնող համայնքների գյուղապետարաններին, եթե այլ կերպ նշված չէ:

Բնակչության բացվածք ըստ սեռի

2010-2012թթ. համայնքներում փաստացի բնակչության մեջ գերակշռել են տղամարդիկ՝ ընդ որում աճի միտումով: Տղամարդկանց կշիռը թեղուտում 2010թ.-ին կազմել է 51.3%, իսկ 2012թ.-ին՝ 52.1%: Շնորհում նույն ցուցանիշը 2010թ.-ին կազմել է 51.3%, իսկ 2012թ.-ին՝ 52.7% (Աղյուսակ 1.3):

Աղյուսակ 1.3. Փաստացի բնակչության բաշխում ըստ սեռի, %, 2012

| Թեղուտ | | Շնող | |
|--------|---------|-------|---------|
| Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| 47.9% | 52.1% | 47.3% | 52.7% |

Աղբյուր՝ գյուղապետարաններ

Բնակչության տարիքային կառուցվածք

Գրանցված բնակչության մեջ անչափահասների կշիռը երկու համայնքներում միանման է՝ 23%-24%, սակայն կենսաթոշակառուների կշիռը Շնողում (33%) գրեթե 3 անգամ գերազանցում է Թեղուտի վերոնշյալ ցուցանիշին (11%): 2010թ. համեմատ 2012թ.-ին 18-62 տարեկան տարիքային խմբի (հիմնական աշխատանքային ռեսուրսներ) կշիռը երկու համայնքներում էլ նվազել է՝ Թեղուտում 0.5%-ով, իսկ Շնողում՝ 1.7%-ով:

Ըստ համայնքներում իրականացված SS հարցման (2013թ. մարտ-ապրիլի դրությամբ)՝ Թեղուտում փաստացի բնակվող բնակչության շրջանում մի փոքր ավելի ցածր է անչափահաս բնակչության կշիռը և ավելի բարձր է կենսաթոշակառուների կշիռը՝ համեմատած գյուղապետարանների տրամադրած՝ համայնքերի գրանցված բնակչության հետ (2012թ. վերջի դրությամբ)¹: Փաստացի և գրանցված բնակչության թվաքանակի համեմատությունը ավելի նկատելի տարբերություններ է վեր հանում Շնող համայնքում: Ըստ SS հարցման (2013թ. մարտ-ապրիլի դրությամբ)՝ Շնողում 18-62 տարեկան փաստացի բնակչությունը կազմել է ընդամենը բնակչության 62%-ը, իսկ ըստ գյուղապետարանների տրամադրած գրանցված բնակչության տվյալների՝ բնակչության վերոնշյալ հատվածի կշիռը կազմել է 44% (2012թ. վերջի դրությամբ):

Աղյուսակ 1.4. Բնակչության բաշխում ըստ տարիքային խմբի, %, 2012

| Տարիքային խմբի կշիռ | Թեղուտ | | Շնող | |
|---------------------|--|---------------------------------------|--|---------------------------------------|
| | Գրանցված բնակչություն (ըստ գյուղապետարանի) | Փաստացի բնակչություն (ըստ SS հարցման) | Գրանցված բնակչություն (ըստ գյուղապետարանի) | Փաստացի բնակչություն (ըստ SS հարցման) |
| Մինչև 17 տարեկան | 23% | 21% | 24% | 21% |
| 18-62 տարեկան | 66% | 66% | 44% | 62% |
| 63 տարեկան և բարձր | 11% | 13% | 33% | 17% |

Աղբյուր՝ գյուղապետարաններ, SS հարցում

Թեղուտում 18-62 տարեկան բնակչության շրջանում գերակշռում է 20-29 տարեկան տարիքային խումբը (32%), իսկ Շնողում՝ 40-49 տարեկանների խումբը (22%), որին փոքր տարբերությամբ

¹ Բացի տվյալների ժամանակային տարբերությունից, տարբերությունները կարող են բացատրվել նաև այն փաստով, որ համայնքների ոչ բոլոր տեսակի տնտեսություններն են մասնակցել հարցմանը (տե՛ս Չավելված I.1):

հաջորդում են 20-29 (21%) և 30-39 (20%) տարիքային խմբերը (Աղյուսակ 1.5):

Աղյուսակ 1.5. 18-62 տարեկան բնակչության բաշխումը ըստ տարիքային խմբերի, %, 2012

| <i>Տարիքային խմբի կշիռ</i> | Թեղուտ | Շնող |
|----------------------------|---------------|-------------|
| 18-19 տարեկան | 4% | 9% |
| 20-29 տարեկան | 32% | 21% |
| 30-39 տարեկան | 20% | 20% |
| 40-49 տարեկան | 21% | 22% |
| 50-59 տարեկան | 20% | 19% |
| 60-62 տարեկան | 3% | 9% |

Աղբյուր՝ գյուղապետարաններ

Տնային տնտեսությունների միջին չափ

Թեղուտում տնային տնտեսությունների (SS) ամենահաճախ հանդիպող չափը բաղկացած է 4 մարդուց (SS 22.1%, ըստ գրանցված բնակչության), որին հաջորդում է SS 6-հոգանոց կազմը (SS 20.7%): Շնողում SS ամենատարածված չափը 4 կամ 5 մարդն է (յուրաքանչյուրը՝ 20.4%), որին հաջորդում են 3 հոգուց բաղկացած տնային տնտեսությունները (Աղյուսակ 1.6):

Աղյուսակ 1.6. Տնային տնտեսությունների միջին չափ, SS կշիռ (%), 2012

| <i>SS միջին չափ, մարդկանց քանակ</i> | Թեղուտ | Շնող |
|-------------------------------------|----------------|-------------|
| | <i>SS կշիռ</i> | |
| Մինչև 2 | 19.3% | 23.2% |
| 3 | 10.3% | 15.2% |
| 4 | 22.1% | 20.4% |
| 5 | 18.6% | 20.4% |
| 6 | 20.7% | 12.4% |
| 7 և ավելի | 9% | 8.6% |

Աղբյուր՝ SS հարցում

Ծնելիություն

2010-2012թթ. ծնվածների միջին թվաքանակը Թեղուտում կազմել է 14, իսկ Շնողում՝ 31: 2012թ.-ին 2010թ. համեմատությամբ ծնելիության մակարդակը (փաստացի 1,000 բնակչի հաշվով) Թեղուտում նվազել է 17.7%-ով, իսկ Շնողում աճել է 12.9%-ով: 2012թ.-ին ծնելիության մակարդակը համեմատաբար ավելի բարձր է եղել Թեղուտում (17.1 ծնված փաստացի 1,000 բնակչի հաշվով՝ համեմատած Շնողի 11.5 ցուցանիշի հետ):

Ըստ ծնելիության տարիքային գործակցի՝ 2012թ.-ին Թեղուտում գերակշռել է 20-24 տարեկան տարիքային խումբը (47%), որին հաջորդում է 25-29 տարեկան տարիքային խումբը (27%): Նշված ժամանակահատվածում Շնողում ևս գերակշռել է 20-24 տարեկան տարիքային խումբը (30%), որին հաջորդում է 20 տարեկանից ցածր տարիքային խումբը (28%):

Աղյուսակ 1.7. Ծնվածների քանակ, 2010-2012թթ.

| <i>Ծնվածների քանակ</i> | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|------------------------------------|---------------|-------------|-----------------------------|
| 2010-2012թթ. միջին | 14 | 31 | 45 |
| 2012թ. | 15 | 36 | 51 |
| <i>1,000 բնակչի հաշվով, 2012թ.</i> | <i>17.1</i> | <i>11.5</i> | <i>12.7</i> |

Աղբյուր՝ Շնողի բժշկական ամբուլատորիա

Մահացություն

2010-2012թթ. մահացածների միջին թվաքանակը թեղուտում կազմել է 6, իսկ Շնողում՝ 27 մարդ: 2012թ.-ին 2010թ. համեմատությամբ մահացության մակարդակը (փաստացի 1,000 բնակչի հաշվով) երկու համայնքներում էլ նվազել է՝ թեղուտում 12.2%-ով, իսկ Շնողում՝ 3.3%-ով: Մահացության մակարդակը (1,000 բնակչի հաշվով) թեղուտում 2012թ.-ին ավելի բարձր է եղել, քան Շնողում:

Թեղուտում 65-ից բարձր տարիքային խմբի կշիռը մահացածների ընդամենը թվաքանակի մեջ 2012թ.-ին կազմել է 85%, իսկ Շնողում՝ 100%: Եվ թեղուտում, և Շնողում մահվան հիմնական պատճառը արյան շրջանառության համակարգի հիվանդություններն են՝ համապատասխանաբար 7 մարդ (88%) և 20 մարդ (77%) 2012թ.-ին: Թեղուտում մահվան մյուս պատճառն է չարորակ նորագոյացությունները (1 մարդ), իսկ Շնողում՝ կրկին չարորակ նորագոյացությունները (4 մարդ) և շնչառական օրգանների հիվանդությունները (2 մարդ):

Ուսումնասիրված ժամանակահատվածում համայնքներում մանկամահացության դեպքեր չեն գրանցվել:

Աղյուսակ 1.8. Մահացածների քանակ, 2012թ.

| <i>Մահացածների քանակ</i> | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|----------------------------|---------------|-------------|-----------------------------|
| Կին | 12 | 4 | 16 |
| Տղամարդ | 14 | 4 | 18 |
| Ընդամենը | 26 | 8 | 34 |
| <i>1,000 բնակչի հաշվով</i> | <i>9.1</i> | <i>8.3</i> | <i>8</i> |

Աղբյուր՝ Շնողի բժշկական ամբուլատորիա

Ամուսնություններ և ամուսնալուծություններ

2012թ.-ին Շնողում գրանցվել է 11 ամուսնություն, իսկ թեղուտում՝ 3 (Աղյուսակ 1.9): Նույն ժամանակահատվածում թեղուտում ամուսնալուծության դեպքեր չեն գրանցվել, իսկ Շնողում գրանցվել է 1 դեպք: 2010-2012թթ. ամուսնության և ամուսնալուծության տարեկան միջին ցուցանիշները 2 համայնքների համար էլ նույնն են, ինչ՝ 2012թ.-ին:

Աղյուսակ 1.9. Ամուսնություններ և ամուսնալուծությունների քանակ, 2012թ.

| Քանակ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|-----------------------|--------|------|----------------------|
| Ամուսնություններ | 3 | 11 | 14 |
| Ամուսնալուծություններ | - | 1 | 1 |

Աղբյուր՝ Ալավերդու քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմին

Արտագաղթ

Ժամանակավոր արտագաղթ¹

Թեղուտից և Շնողից պարբերաբար արտագնա աշխատանքի են մեկնել տնային տնտեսությունների համապատասխանաբար 4.8%-ից և 4.4%-ից: 2013թ.-ին (ապրիլ-դեկտեմբեր ժամանակահատվածում) Թեղուտի և Շնողի SS համապատասխանաբար 3.4%-ից և 2.8%-ից պատրաստվում են մեկնել արտագնա աշխատանքի:

2 համայնքներում էլ արտագնա աշխատանքի մեկնելու հիմնական պատճառը եղել է աշխատանքի բացակայությունը (Թեղուտում՝ 69% և Շնողում՝ 63%): Սրան հաջորդում է ցածր աշխատավարձը (19%՝ Շնողում) և համապատասխան աշխատանքի բացակայությունը (16%՝ Թեղուտում):

Մշտական արտագաղթ

Ըստ համայնքներում հարցման պահին (2013թ. մարտ-ապրիլ) բնակվող տնային տնտեսությունների պատասխանների՝ 2005-2012թթ. ընթացքում վերոնշյալ SS 4%-ից եղել են մշտական արտագաղթողներ (հիմնականում 1 մարդ յուրաքանչյուր տնային տնտեսությունից)՝ 6 մարդ Թեղուտից և 21 մարդ Շնողից: Համայնքներից ամբողջ կազմով մշտական արտագաղթած SS վերաբերյալ ամբողջապես ճշգրիտ տեղեկատվություն առկա չէ, սակայն ըստ գյուղապետարանների տվյալների², 2010-2012թթ. Թեղուտից ամբողջ կազմով մշտական արտագաղթած տնային տնտեսություններ հիմնականում չեն գրանցվել, իսկ Շնողից եղել են 3 SS (12-15 մարդ): 2006-2009թթ. և Թեղուտից ամբողջ կազմով մշտական արտագաղթած տնային տնտեսություններ հիմնականում չեն եղել, իսկ Շնողից դրանց քանակը կազմել է մոտ 6-7 (25-30 մարդ):

Ըստ համայնքներում հարցման պահին բնակվող բնակիչների՝ 2005-2012թթ. ընթացքում իրենց տնային տնտեսություններից մշտական արտագաղթողները հիմնականում մեկնել են ԱՊՀ երկրներ (83%՝ թեղուտցիների պարագայում և 50%՝ շնողցիների): Շնողից վերոնշյալ արտագաղթածների 41%-ը հաստատվել է ՀՀ այլ վայրերում, մասնավորապես՝ Լոռու մարզում (23%): Արտագաղթի ամենատարածված պատճառը 2 համայնքներում էլ հանդիսացել է աշխատանքի բացակայությունը համայնքում (50%՝ Թեղուտում և 33%՝ Շնողում): Շնողցիների պարագայում հաջորդ ամենատարածված պատճառը հանդիսացել է ամուսնությունը՝ 29%:

Ըստ հարցված տնային տնտեսությունների՝ մոտակա 1-2 տարում Թեղուտից պատրաստվում են մշտական արտագաղթել 12 մարդ, իսկ Շնողից՝ 46: Որպես արտագաղթի հիմնական պատճառ թեղուտցիների պարագայում գերակշռում է միացումն ընտանիքի այլ անդամների հետ (40%),

¹ Աղբյուր՝ SS հարցում:

² Սույն գնահատականը հիմնված է գյուղապետարաններում առկա տեղեկատվության վրա, որը կարող է ամբողջական չլինել:

որին հաջորդում է աշխատանքի (ներառյալ գրավիչ կամ մասնագիտական) բացակայությունը գյուղում: Ճնողիների պարագայում գերակայող պատճառը գյուղում աշխատանքի բացակայությունն է (54%):

Խոցելի խմբեր

2010-2012թթ. հաշմանդամների քանակը թեղուտում աճել է 12%-ով, իսկ ճնողում՝ մնացել է անփոփոխ: Փաստացի 1,000 բնակչության հաշվով հաշմանդամների քանակը ճնողում (58) ավելի քան 3 անգամ գերազանցում է նույն ցուցանիշը թեղուտում (19):

2010-2012թթ. ծնողագուրկ երեխաների քանակը երկու համայնքներում էլ մնացել է անփոփոխ: Թեղուտում երկկողմանի ծնողագուրկ երեխա չկա, իսկ ճնողում գրանցվել է 1 երեխա: Միակողմանի ծնողագուրկ երեխաների քանակը թեղուտում և ճնողում կազմել է համապատասխանաբար 2 և 11 երեխա (Աղյուսակ 1.10):

2012թ. դրությամբ թեղուտում աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն էին ստանում բնակիչների 1.9%-ը, իսկ ճնողում՝ 6.2%-ը (ընդ որում 2010թ. համեմատ 2012թ.-ին վերոնշյալ ցուցանիշը ճնողում մնացել է անփոփոխ, իսկ թեղուտում նվազել է 1.1%-ով): 2012թ.-ին թեղուտում ավելի շատ են եղել աղքատության ընտանեկան նպաստ ստացող ընտանիքները՝ 5 (միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքների քանակը՝ 2), ճնողում՝ նույնպես (աղքատության ընտանեկան նպաստ ստացող 65 ընտանիք և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքների բացակայություն):

Աղյուսակ 1.10. Խոցելի խմբերում ընդգրկված բնակչության քանակ, 2012թ.

| Քանակ | Թեղուտ | Ճնող | Թեղուտ և Ճնող միասին |
|---|--------|------|----------------------|
| Հաշմանդամներ | 17 | 182 | 199 |
| Ծնողագուրկ երեխաներ* | 2 | 12 | 14 |
| Աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացողներ | 7 | 65 | 72 |

**Միակողմանի և երկկողմանի Աղբյուր՝ գյուղապետարաններ*

2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսական նշանակության հողեր

Շնորհի գյուղատնտեսական նշանակության ընդամենը հողատարածքների մեջ գերակշռում են վարելահողը (32%) և արոտը (24%), իսկ թեղուտում՝ արոտը (48%): Երկու համայնքներում էլ համայնքին պատկանող ռեզերվային հողատարածքները գերազանցում են SS պատկանող հողատարածքներին:

SS պատկանող հողատարածքները թեղուտում ամբողջապես բաղկացած են տնամերձ հողերից (հիմնականում բազմամյա տնկարկ և մասամբ՝ խոտհարք), իսկ Շնողում գերակշռում են վարելահողը (55%) և խոտհարքը (35%): Ըստ գյուղապետարանների տրամադրած տվյալների՝ թեղուտում 2012թ.-ին մշակվել է տնային տնտեսություններին պատկանող բազմամյա տնկարկների, վարելահողերի և այլ տնամերձ հողատարածքների շուրջ 77%-ը (մոտ 41 հա), իսկ Շնողում՝ 60%-ը (մոտ 247 հա): Ըստ Նույն աղբյուրի՝ թեղուտում SS պատկանող մշակվող հողատարածքները չեն ոռոգվում, իսկ Շնողում ոռոգվում է մշակվող վարելահողերի 82%-ը և բազմամյա տնկարկներն՝ ամբողջությամբ:

2011-2012թթ. թեղուտում գյուղատնտեսական նշանակության հողերի տեսակների չափը մնացել է անփոփոխ: Նույն ժամանակահատվածում Շնողում 22 հա-ով կրճատվել է արոտը (համայնքի ռեզերվային հողեր)՝ 344 հա-ից նվազելով մինչև 322 հա, իսկ SS պատկանող խոտհարքի տարածքներն աճել են 9 հա-ով՝ 256 հա-ից դառնալով 265 հա:

Աղյուսակ 2.1. Գյուղատնտեսական հողերի տարածք, հա, 2012թ.

| Չա | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|---|------------|--------------|----------------------|
| Վարելահող | 7 | 434 | 441 |
| Բազմամյա տնկարկ | - | 63 | 63 |
| Խոտհարք | 36 | 265 | 301 |
| Արոտ | 119 | 322 | 441 |
| Այլ հողեր | 84 | 253 | 337 |
| Ընդամենը | 246 | 1,337 | 1,583 |
| <i>Ընդամենը գյուղատնտեսական նշանակության տնային տնտեսությունների սեփական հողեր</i> | <i>53</i> | <i>633</i> | <i>686</i> |
| <i>Ընդամենը գյուղատնտեսական նշանակության համայնքի ռեզերվային հողեր (բացի անտառից)</i> | <i>193</i> | <i>704</i> | <i>897</i> |

Աղբյուր՝ գյուղապետարաններ

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքատարածություններ

Թեղուտում հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունները (Աղյուսակ 2.2) այգետարածքներն են (54%), որին հաջորդում են բանջարեղենն (24%) ու կարտոֆիլը (22%), իսկ Շնողում՝ հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերը՝ (41%), այգետարածքները (25%) և բանջարեղենը (19%):

Աղյուսակ 2.2. Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքատարածություններ, հա, 2012թ.

| Չա | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|--|-----------|------------|----------------------|
| Չացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր | - | 100 | 100 |
| Կարտոֆիլ | 9 | 26 | 35 |
| Բանջարեղեն | 10 | 48 | 58 |
| Բոստանային մշակաբույսեր | - | 4 | 4 |
| Կերային մշակաբույսեր | - | 6 | 6 |
| Այգետարածքներ | 22 | 63 | 85 |
| Ընդամենը ցանքատարածություններ | 41 | 247 | 288 |

Աղբյուր՝ գյուղապետարաններ

Գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակների արտադրություն

Թեղուտում և Շնողում գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակները և ծավալները ներկայացված են Աղյուսակում 2.3-ում: Թեղուտում 2012թ.-ին 2011թ. համեմատ գյուղատնտեսական բոլոր արտադրատեսակների ծավալներն աճել են, ընդ որում մրգի և հատապտղի ծավալներն աճել են 139%-ով, բանջարեղենը՝ 38%-ով և կարտոֆիլը՝ 33%-ով: Նույն ժամանակահատվածում Շնողում բոլոր արտադրատեսակների ծավալներն աճել են բացի ձվից (42% նվազում), ընդ որում մրգի և հատապտղի ծավալներն աճել են շուրջ 196%-ով, միսը (սպանդային քաշով)՝ 89%-ով և բոստանային մշակաբույսերը՝ 39%-ով:

Աղյուսակ 2.3. Գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակների արտադրության ծավալներ, 2012թ.

| Գյուղատնտեսական արտադրանք | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|---------------------------------------|--------|---------|----------------------|
| Չացահատիկային և հատիկաընդեղեն (տոննա) | - | 142 | 142 |
| Կարտոֆիլ (տոննա) | 25 | 140 | 165 |
| Բանջարեղեն (տոննա) | 13 | 493 | 506 |
| Բոստանային մշակաբույսեր (տոննա) | - | 25 | 25 |
| Միրգ և հատապտուղ (տոննա) | 62 | 878 | 940 |
| Միս (սպանդային քաշով, տոննա) | 2 | 26 | 28 |
| Կաթ, (տոննա) | 171 | 678 | 849 |
| Ձուլ (հատ) | 77,400 | 236,700 | 314,100 |
| Պանիր (տոննա) | 10 | 136 | 146 |

Աղբյուր՝ գյուղապետարաններ

Անասնի և թռչնի գլխաքանակ

Թեղուտում անասունների շարքում գերակշռում են ոչխարներն ու այծերը, իսկ Շնողում՝ կովերը: 2010թ. համեմատ 2012թ.-ին Թեղուտում անասունների բոլոր տեսակները քանակապես աճ են արձանագրել, ընդ որում խոզերը՝ 124%-ով և կովերը՝ 41%-ով: Շնողում Նույն ժամանակահատվածում կովերի և խոզերի գլխաքանակն աճել է (համապատասխանաբար 35% և 238%), ոչխարների և այծերի գլխաքանակը նվազել է (24%), իսկ ձիերինը՝ մնացել անփոփոխ:

Երկու համայնքներում էլ տնային տնտեսությունները պահում են թռչուններ (հիմնականում՝ հավ) և մեղվաընտանիքներ: 2010թ. համեմատ 2012թ.-ին թռչունների գլխաքանակը Թեղուտում աճել է 24%-ով, իսկ Շնողում՝ նվազել 19%-ով: Նույն ժամանակահատվածում մեղվաընտանիքների քանակը Շնողում և Թեղուտում գրանցել է համապատասխանաբար 65% և 3% աճ:

Աղյուսակ 2.4. Անասնի և թռչնի գլխաքանակ, 2012թ.

| Գլխաքանակ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|------------------|------------|------------|----------------------|
| Կովեր | 79 | 339 | 418 |
| Ոչխարներ և այծեր | 147 | 44 | 191 |
| Խոզեր | 103 | 27 | 130 |
| Ձիեր | 11 | 21 | 32 |
| Ընդամենը | 340 | 431 | 771 |
| <i>Այլ</i> | | | |
| Թռչուններ | 756 | 1,757 | 2,513 |
| Մեղվաընտանիքներ | 399 | 295 | 694 |
| Ավանակներ | - | 6 | 6 |

Աղբյուր՝ գյուղապետարաններ

Գյուղատնտեսական տեխնիկայի առկայություն

2010-2012թթ. գյուղատնտեսական տեխնիկայի քանակը երկու համայնքներում էլ գրեթե չի փոխվել և հիմնականում բաղկացած է տրակտորներից և բեռնատար մեքենաներից: Գյուղտեխնիկայի մեծ մասը խորհրդային ժամանակաշրջանի ժառանգություն է և հետանկախացման շրջանում էական թարմացումներ չեն եղել:

Աղյուսակ 2.5. Գյուղատնտեսական տեխնիկայի քանակ, 2012թ.

| Քանակ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|---------------------|-----------|-----------|----------------------|
| Տրակտոր | 16 | 25 | 41 |
| Բեռնատար ավտոմեքենա | 5 | 55 | 60 |
| Այլ | 3 | 16 | 19 |
| Ընդամենը | 24 | 96 | 120 |

Աղբյուր՝ գյուղապետարաններ

Գյուղատնտեսությանը զբաղվող տնային տնտեսություններ¹

Անասնապահությանը զբաղվող (ներառյալ թռչուն պահող) ՏՏ քանակը 2010-2012թթ. երկու համայնքներում էլ աճել է. 2012թ.-ին Թեղուտում անասուն կամ թռչուն են պահել ՏՏ 69%-ը (53% 2010թ.-ին), իսկ Շնողում՝ 41%-ը (29% 2010թ.-ին): 2010թ. համեմատ 2012թ.-ին սեփական հող, անասուն կամ թռչուն ունեցող ՏՏ կշիռն ընդամենի մեջ շնողում մնացել է անփոփոխ՝ 96%, իսկ Թեղուտում աճել է՝ 42%-ից հասնելով 53%-ի:

Աղյուսակ 2.6. Գյուղատնտեսությանը զբաղվող տնային տնտեսությունների քանակ, 2012թ.

| <i>Քանակ</i> | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|---|---------------|-------------|-----------------------------|
| Անասուն կամ թռչուն պահող ՏՏ | 120 | 326 | 446 |
| ՏՏ, որոնք չունեն ոչ սեփական հող, ոչ անասուն | 82 | 29 | 111 |

Աղբյուր՝ գյուղապետարաններ

Անասնապահություն

Երկու համայնքներում էլ ընդհանուր հովվի պրակտիկա չկա, և անասնապահությանը զբաղվող տնային տնտեսություններն իրենք են իրենց անասուններին տանում արածեցնելու:

Թեղուտի բնակիչների անասուններին արածեցնելու հիմնական վայրերից է Կարծախի արոտավայրը, որի տարածքը «Թեղուտ» ՓԲԸ-ի հանքի շահագործման ծրագրի շրջանակներում ընդգրկված չէ:

Նախկինում Շնողի մերձակայքում եղել է արոտավայր, որը այժմ չի գործածվում «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության հետևանքով: Ներկայումս շնողի անասնապահները անասուններին արածեցնելու համար հիմնականում տանում են Գուլաբի, Ղանիթալա, Արջակուտ կոչվող արոտավայրերը, որոնք Շնողից գտնվում են մինչև 30 կմ հեռավորության վրա, մինչդեռ նախկինում մինչ «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության սկիզբը գործածվող արոտավայրերի հեռավորությունը գյուղից կազմում էր մինչև 12 կմ: Ներկայումս շնողիները անասուններին արածեցնելու նպատակով կարող են ժամանակավորապես գործածել «Թեղուտ» ՓԲԸ-ի տնօրինության տակ գտնվող՝ համայնքին մերձակա որոշ տարածքներ:

¹ Համայնքների բնակիչների զբաղվածությունը գյուղատնտեսությունում ավելի մանրամասն ներկայացված է «Զբաղվածություն» և «Կյանքի որակ» բաժիններում:

3. Չբաղվածություն¹

Չբաղվածության նկարագիր

Թեղուտում աշխատավարձով վարձու աշխատանք (որպես հիմնական զբաղմունք, աշխատավարձով) ունի հարցված տնային տնտեսությունների աշխատանքային ռեսուրս² հանդիսացող կանանց 27.3%-ը³ (77 մարդ) և տղամարդկանց 49%-ը (129 մարդ): Շնորհի վերոնշյալ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար 17.1% (161 մարդ) և 34.5% (300 մարդ):

Սեփական բիզնես ունի Թեղուտի հարցված SS աշխատանքային ռեսուրս հանդիսացող տղամարդկանց 1.1%-ը (3 մարդ): Հարցումները Թեղուտից սեփական բիզնես ունեցող կանանց չեն արձանագրել: Շնորհի վերոնշյալ ցուցանիշը կանանց և տղամարդկանց համար համապատասխանաբար 1.1% (10 մարդ) և 2% (17 մարդ) է:

Ըստ հարցումների արդյունքների՝ SS այն կշիռը, որոնց կազմում կա նվազագույնը մեկ վարձու աշխատող, Թեղուտում կազմում է շուրջ 81%, իսկ Շնորհում՝ 60%:

Աղյուսակ 3.1. Վարձու աշխատող և սեփական բիզնես ունեցող բնակիչների բաշխումը ըստ սեռի (%), 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Չբաղվածություն | Թեղուտ | | Շնորհ | |
|-----------------|--------|---------|-------|---------|
| | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| Վարձու աշխատանք | 27.3% | 49.0% | 17.1% | 34.5% |
| Սեփական բիզնես* | - | 1.1% | 1.1% | 2.0% |

* Չի ներառում սեփական ընտանիքի գյուղատնտեսական աշխատանքները:

Աղբյուր՝ SS հարցում

Տարիքային բաշխում

Հարցված տնային տնտեսությունների շրջանում՝ Թեղուտում կին վարձու աշխատողների մեջ գերակշռում են 45-54 և 35-44 տարիքային խմբերը (համապատասխանաբար՝ 26% և 19.5%, Աղյուսակ 3.2), իսկ տղամարդկանց մեջ՝ 25-34 և 45-54 տարիքային խմբերը (համապատասխանաբար՝ 30.2% և 24.8%): Շնորհում կին վարձու աշխատողների մեջ գերակշռում են 45-54 և 25-34 տարիքային խմբերը (համապատասխանաբար՝ 35.4% և 20.5%), իսկ տղամարդկանց մեջ՝ 45-54 և 25-34 տարիքային խմբերը (համապատասխանաբար՝ 31.3% և 25.3%):

¹ «Չբաղվածություն» և «Կյանքի որակ» բաժիններում հիմնականում գործածված է համայնքների SS հարցումներից ստացված տվյալներ:

² 15-75 տարեկան անձինք, որոնց ֆիզիկական և հոգեկան առողջական վիճակը թույլատրում է աշխատել:

³ Հարկ է նշել, որ ըստ հարցումների իրենց տնային տնտեսուհի դասակարգած կանայք ընդգրկված չեն վերոնշյալ վարձու աշխատող համարվող կանանց խմբում:

Աղյուսակ 3.2. Վարձու աշխատող բնակիչների սեռատարիքային բաշխումը (%), 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Տարիքային խումբ | Թեղուտ | | Շնող | |
|-----------------|--------|---------|-------|---------|
| | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| 15-24 | 9.1% | 10.1% | 6.8% | 8.0% |
| 25-34 | 19.5% | 30.2% | 20.5% | 25.3% |
| 35-44 | 26.0% | 17.1% | 14.9% | 15.3% |
| 45-54 | 27.3% | 24.8% | 35.4% | 31.3% |
| 55-64 | 18.2% | 16.3% | 19.9% | 17.7% |
| 65 և բարձր | 0.0% | 1.6% | 2.5% | 2.0% |

Աղբյուր՝ ՏՏ հարցում

Կրթություն

Երկու համայնքների հարցված տնային տնտեսությունների վարձու աշխատող կանանց շրջանում էլ գերակշռող կրթության տեսակը մանկավարժականն է (45.2%՝ Թեղուտում և 48.9%՝ Շնողում): Թեղուտի կանանց շրջանում հաջորդում է առողջապահական և կացության և հանրային սննդի կազմակերպման կրթությունը (յուրաքանչյուրը՝ 14.3%), իսկ Շնողի կանանց շրջանում՝ բնագիտական կամ ճարտարագիտական կրթությունը (16%):

Թեղուտի հարցված տնային տնտեսությունների վարձու աշխատող տղամարդկանց շրջանում գերակշռող կրթությունը բնագիտական կամ ճարտարագիտականն է (23.1%), որին հաջորդում է շինարարականը (13.5%): Շնողի վարձու աշխատող տղամարդկանց շրջանում գերակշռում է մանկավարժական կրթությունը (20.7%), որին հաջորդում է շինարարականը (13.3%):

Աղյուսակ 3.3. Վարձու աշխատող բնակիչների կրթության բացվածք, բնակիչների կշիռ (%), 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Կրթություն | Թեղուտ | | Շնող | |
|---|--------|---------|-------|---------|
| | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| Բնական գիտությունների կամ ճարտարագիտության ոլորտների մասնագետ | 11.9% | 23.1% | 16.0% | 12.6% |
| Գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնաբուծության ոլորտների մասնագետ | 4.8% | 11.5% | 1.5% | 10.4% |
| Հանքագործական արդյունաբերության ոլորտի մասնագետ | - | 7.7% | 0.8% | 6.7% |
| Շինարարության ոլորտի մասնագետ | - | 13.5% | 3.8% | 13.3% |
| Առողջապահության ոլորտի մասնագետ | 14.3% | 3.8% | 10.7% | 3.0% |
| Կրթության ոլորտի մասնագետ | 45.2% | 7.7% | 48.9% | 20.7% |
| Տրանսպորտի և կապի ոլորտի մասնագետ | - | 9.6% | 0.8% | 9.6% |
| Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետ | - | - | 1.5% | 1.5% |

| Կրթություն | Թեղուտ | | Շնող | |
|--|--------|---------|------|---------|
| | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| Կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտների մասնագետ | 14.3% | 3.8% | 0.8% | 2.2% |
| Մշակույթի ոլորտի մասնագետ | - | - | 6.9% | 0.7% |
| Այլ | 9.5% | 19.2% | 8.4% | 19.3% |

Աղբյուր՝ ՏՏ հարցում

Աշխատանքի ոլորտ

Երկու համայնքների հարցված տնային տնտեսությունների վարձու աշխատող կանանց շրջանում էլ զբաղվածության գերակշռող ոլորտները սպասարկումը (ծառայությունները) և կրթությունն են (համապատասխանաբար 35.5% և 26.3% թեղուտում, իսկ Շնողում՝ 16.6% և 45.9%):

Թեղուտի տղամարդկանց շրջանում զբաղվածության գերակշռող ոլորտները հանքագործական արդյունաբերությունը, շինարարությունը և սպասարկումը (ծառայություններն) են (համապատասխանաբար 25.4%, 22.2% և 20.6%): Շնողի հարցված ՏՏ վարձու աշխատող տղամարդկանց շրջանում զբաղվածության գերակշռող ոլորտներն են շինարարությունը և փոխադրումները (յուրաքանչյուրը՝ 18.5%) և սպասարկումը (ծառայությունները)՝ 17.4%:

Աղյուսակ 3.4. Վարձու աշխատող բնակիչների աշխատանքի ոլորտի բացվածք, բնակիչների կշիռ (%), 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Տնտեսության ոլորտ | Թեղուտ | | Շնող | | Թեղուտ և Շնող միասին | |
|--|--------|---------|-------|---------|----------------------|---------|
| | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| Գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն | 2.6% | 3.2% | 1.3% | 5.7% | 1.7% | 5.0% |
| Հանքագործական արդյունաբերություն և դրա հետ կապված աշխատանք | 6.6% | 25.4% | 1.3% | 11.4% | 3.0% | 15.6% |
| Շինարարություն | 3.9% | 22.2% | 2.5% | 18.5% | 3.0% | 19.6% |
| Փոխադրումներ | 1.3% | 11.9% | - | 18.5% | 0.4% | 16.5% |
| Սպասարկում (ծառայություններ) | 35.5% | 20.6% | 16.6% | 17.4% | 22.7% | 18.4% |
| Վարչարարական և օժանդակ գործունեություն | 11.8% | 6.3% | 8.9% | 4.0% | 9.9% | 4.7% |
| Կրթություն | 26.3% | 1.6% | 45.9% | 4.7% | 39.5% | 3.8% |
| Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում | 3.9% | 0.8% | 5.7% | 0.3% | 5.2% | 0.5% |
| Մշակույթ, զվարճություններ և հանգիստ | 2.6% | 0.8% | 4.5% | 0.7% | 3.9% | 0.7% |
| Այլ | 5.3% | 7.1% | 13.4% | 18.8% | 10.7% | 15.3% |

Աղբյուր՝ ՏՏ հարցում

Աշխատանքի վայր

Երկու համայնքների հարցված տնային տնտեսությունների վարձու աշխատող տղամարդկանց, իսկ Թեղուտում նաև կանանց շրջանում հիմնական աշխատավայրը «Թեղուտ» ՓԲԸ-ն է¹ (համապատասխանաբար 81.7%, 59.7% և 49.3%): Շնորհի կանանց շրջանում հիմնական աշխատավայրը հայրենի գյուղում է («Թեղուտ» ՓԲԸ-ի հետ կապ չունեցող աշխատանք): Հայրենի գյուղից դուրս (և «Թեղուտ» ՓԲԸ-ի հետ կապ չունեցող) է աշխատում հարցված ՏՏ վարձու աշխատող տղամարդկանց 11.2%-ը և 23%-ը և կանանց 12%-ը և 21.8%-ը՝ Թեղուտից և Շնորհից համապատասխանաբար:

Աղյուսակ 3.5. Վարձու աշխատող բնակիչների հիմնական աշխատավայրի բացվածք, բնակիչների կշիռ (%), 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| <i>Աշխատանքի վայր</i> | Թեղուտ | | Շնող | | Թեղուտ և Շնող միասին | |
|--|---------------|----------------|-------------|----------------|-----------------------------|----------------|
| | <i>Կին</i> | <i>Տղամարդ</i> | <i>Կին</i> | <i>Տղամարդ</i> | <i>Կին</i> | <i>Տղամարդ</i> |
| «Թեղուտ» ՓԲԸ | 49.3% | 81.7% | 9.6% | 59.7% | 22.5% | 66.3% |
| Հայրենի գյուղ («Թեղուտ» ՓԲԸ-ի հետ կապ չունեցող աշխատանք) | 38.7% | 7.1% | 68.6% | 17.3% | 58.9% | 14.3% |
| Հարևան գյուղեր | 6.7% | 4.0% | 2.6% | 8.1% | 3.9% | 6.9% |
| Ալավերդի | 1.3% | 1.6% | 8.3% | 5.1% | 6.1% | 4.0% |
| Այլ | 4.0% | 5.6% | 10.9% | 9.8% | 8.7% | 8.6% |

Աղբյուր՝ ՏՏ հարցում

Վարձատրություն

Երկու համայնքների հարցված տնային տնտեսությունների վարձու աշխատող կանանց շրջանում էլ գերակշռում է ամսական վարձատրության 36,000-60,000 դրամ միջակայքը (Թեղուտում՝ 50% և Շնողում՝ 55.7%): Տղամարդկանց վարձատրության միջակայքերն ավելի լայն են բաշխված: Երկու համայնքների տղամարդկանց շրջանում էլ գերակշռում են 91,000-120,000 և 61,000-90,000 դրամ ամսական վարձատրության միջակայքերը (Թեղուտում համապատասխանաբար՝ 33.3% և 25.4%, իսկ Շնորհի տղամարդկանց շրջանում՝ 29.7% և 27.2%):

Աղյուսակ 3.6. Վարձու աշխատող բնակիչների վարձատրության բացվածք, բնակիչների կշիռ (%), 2012թ.

| <i>Միջին ամսական աշխատավարձ</i> | Թեղուտ | | Շնող | | Թեղուտ և Շնող միասին | |
|---|---------------|----------------|-------------|----------------|-----------------------------|----------------|
| | <i>Կին</i> | <i>Տղամարդ</i> | <i>Կին</i> | <i>Տղամարդ</i> | <i>Կին</i> | <i>Տղամարդ</i> |
| Նվազագույն աշխատավարձի սահմաններում (մինչև 35,000 դրամ) | 15.8% | 2.6% | 19.0% | 3.6% | 17.9% | 3.3% |
| 36,000-60,000 դրամ | 50.0% | 17.5% | 55.7% | 20.1% | 53.8% | 19.3% |
| 61,000-90,000 դրամ | 19.7% | 25.4% | 13.3% | 27.2% | 15.4% | 26.7% |

¹ Համայնքների բնակիչների զբաղվածությունը «Թեղուտ» ՓԲԸ-ում ավելի մանրամասն ներկայացված է սույն բաժնում հաջորդիվ:

| Միջին ամսական աշխատավարձ | Թեղուտ | | Շնող | | Թեղուտ և Շնող միասին | |
|--------------------------|--------|---------|------|---------|----------------------|---------|
| | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| 91,000-120,000 դրամ | 7.9% | 33.3% | 8.2% | 29.7% | 8.1% | 30.8% |
| 121,000-150,000 դրամ | - | 7.9% | 2.5% | 10.0% | 1.7% | 9.4% |
| 151,000-200,000 դրամ | 2.6% | 6.1% | - | 6.5% | 0.9% | 6.4% |
| 201,000-300,000 դրամ | 3.9% | 6.1% | 1.3% | 2.5% | 2.1% | 3.6% |
| 300,000 դրամից բարձր | - | 0.9% | - | 0.4% | - | 0.5% |

Աղբյուր՝ ՏՏ հարցում

Երկու համայնքներում էլ մինչև 60,000 դրամ ստացող կանանց շրջանում զբաղվածության գերակշռող ոլորտը կրթականն է: Ամսական 60,000 դրամից բարձր վարձատրվող կանանց շրջանում գերակշռող զբաղվածությունը սպասարկումը (ծառայություններն) են:

Տղամարդկանց շրջանում երկու համայնքներում էլ ամսական մինչև 60,000 դրամ վարձատրությամբ զբաղվածության գերակշռող ոլորտները շինարարությունը և սպասարկումը (ծառայություններն) են: Ամսական 60,100-120,000 դրամ վարձատրվող թեղուտի տղամարդկանց շրջանում գերակշռող զբաղվածությունը հանքագործական արդյունաբերության ոլորտում է, իսկ Շնողում՝ սպասարկման (ծառայությունների) և փոխադրումների: Երկու համայնքներում էլ 121,000 դրամ և բարձր վարձատրվող տղամարդկանց շրջանում գերակշռող զբաղվածությունը հանքագործական արդյունաբերության, շինարարության և փոխադրումների ոլորտներում է:

Եվ թեղուտում, և Շնողում, ամսական 91,000 դրամ և բարձր աշխատավարձ ստացող բնակիչների բացարձակ մեծամասնությունը «Թեղուտ» ՓԲԸ-ի աշխատակիցներն են:

Գործազրկություն

Պաշտոնապես գրանցված գործազրկություն

2012թ.-ին Թեղուտի բնակիչներից պաշտոնապես գրանցված է եղել 3, իսկ Շնողի բնակիչներից՝ 15 գործազուրկ (Աղյուսակ 3.7): Թեղուտի գործազուրկ բնակիչներից 2-ը պատկանել են 55-64 տարիքային խմբին, իսկ 1-ը՝ 35-44: Շնողի պաշտոնապես գրանցված գործազուրկներից 4-ական մարդ պատկանել են 35-44, 45-54 և 55-65 տարիքային խմբերին, մյուս 3-ը՝ 15-34 տարիքային խմբին:

Աղյուսակ 3.7. Պաշտոնապես գրանցված գործազուրկների քանակ, 2012թ.

| Քանակ | Թեղուտ | | Շնող | | Թեղուտ և Շնող միասին | |
|-----------------------------------|--------|---------|------|---------|----------------------|---------|
| | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| Պաշտոնապես գրանցված գործազուրկներ | 2 | 1 | 13 | 2 | 15 | 3 |

Աղբյուր՝ 33 աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության Ալավերդու բաժին

Գործազրկության մակարդակ՝ ըստ հարցումների

Ըստ համայնքների SS հարցումների՝ Թեղուտում կա 27 կին և 46 տղամարդ գործազուրկ, իսկ Շնողում՝ համապատասխանաբար 74 և 195¹: Թեղուտում կին գործազուրկների ամենախոշոր տարիքային խումբը 15-24 տարեկաններինն է (40.6%), իսկ տղամարդկանցը՝ 25-34 տարեկան խումբը (36.7%): Շնողում գործազուրկների տարիքային խմբերի բաշխվածությունն ավելի լայն է: Կին գործազուրկները հիմնականում 25-34, 35-44 և 15-24 տարիքային խմբերում են (համապատասխանաբար՝ 26.7%, 24% և 22.7%): Տղամարդ գործազուրկները հիմնականում պատկանում են 25-34, 45-54 և 35-44 տարիքային խմբերին (համապատասխանաբար՝ 24.5%, 24% և 20.4%):

Աղյուսակ 3.8. Համայնքների գործազուրկների սեռատարիքային բացվածք*, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Տարիքային խումբ | Թեղուտ | | Շնող | | Թեղուտ և Շնող միասին | |
|-----------------|--------|---------|-------|---------|----------------------|---------|
| | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| 15-24 | 40.6% | 22.4% | 22.7% | 16.3% | 28.0% | 17.6% |
| 25-34 | 15.6% | 36.7% | 26.7% | 24.5% | 23.4% | 26.9% |
| 35-44 | 6.3% | 4.1% | 24.0% | 20.4% | 18.7% | 17.1% |
| 45-54 | 15.6% | 16.3% | 14.7% | 24.0% | 15.0% | 22.4% |
| 55-64 | 6.3% | 14.3% | 10.7% | 14.3% | 9.3% | 14.3% |
| 65 և բարձր | 15.6% | 6.1% | 1.3% | 0.5% | 5.6% | 1.7% |

**Ըստ SS հարցումների, ներառում է պաշտոնապես գրանցված և չգրանցված գործազուրկներին:
Աղբյուր՝ SS հարցում*

Երկու համայնքներում էլ գործազուրկ և կանանց և տղամարդկանց շրջանում գործազրկության գերակա պատճառն աշխատանքից ազատումը կամ աշխատատեղերի կրճատումն է:

Թեղուտում գործազուրկ է դպրոցական կրթություն ունեցող բնակիչների 15%-ը և բարձրագույն կրթություն ունեցողների 21%-ը: Շնողում հակառակ պատկերն է. գործազուրկ է դպրոցական և բարձրագույն կրթություն ունեցող բնակիչների համապատասխանաբար 20%-ը և 15%-ը:

Թեղուտի գործազուրկ կանանց շրջանում գերակշռող խումբը բնական գիտությունների կամ ճարտարագիտության և կրթության ոլորտների մասնագետներն են (համապատասխանաբար՝ 38.5% և 30.8%, Աղյուսակ 3.9), իսկ Շնողի կանանց շրջանում՝ կրթության ոլորտի մասնագետները (30%):

Թեղուտի տղամարդկանց շրջանում ևս գերակշիռ խումբը բնական գիտությունների կամ ճարտարագիտության ոլորտի մասնագետներն են (23.8%), որին հաջորդում են մանկավարժական կրթությամբ մասնագետները (19%), իսկ Շնողի տղամարդկանց շրջանում՝ շինարարական և առողջապահական կրթությամբ մասնագետներն են (համապատասխանաբար՝ 20.8% և 12.5%):

¹ Վերոնշյալ թվերը ներառում են պաշտոնապես և գրանցված և չգրանցված գործազուրկներին: Քանի որ հարցումները չեն ընդգրկում համայնքների բոլոր տնային տնտեսություններին, հետևաբար, համայնքների ընդամենը գործազուրկների քանակը կարող է ավելի մեծ լինել:

Աղյուսակ 3.9. Գործազուրկների բացվածք ըստ մասնագիտության, բնակիչների կշիռ (%), 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Կրթություն | Թեղուտ | | Շնող | |
|---|--------|---------|-------|---------|
| | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| Բնական գիտությունների կամ ճարտարագիտության ոլորտների մասնագետ | 38.5% | 23.8% | 2.5% | 10.4% |
| Գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնաբուծության ոլորտների մասնագետ | - | 14.3% | - | 10.4% |
| Չանքագործական արդյունաբերության ոլորտի մասնագետ | - | 4.8% | 5.0% | 4.2% |
| Շինարարության ոլորտի մասնագետ | - | 9.5% | 7.5% | 20.8% |
| Առողջապահության ոլորտի մասնագետ | 7.7% | - | 17.5% | 12.5% |
| Կրթության ոլորտի մասնագետ | 30.8% | 19.0% | 30.0% | 10.4% |
| Կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտների մասնագետ | 7.7% | 9.5% | - | 6.3% |
| Այլ | 15.4% | 19.0% | 37.5% | 25.0% |

Աղբյուր՝ ՏՏ հարցում

Տեղական խոշոր գործատուներ

«Թեղուտ» ՓԲԸ¹

Ձբաղվածություն ըստ սեռի և տարիքի

«Թեղուտ» ՓԲԸ-ն թիրախային համայնքներում գտնվող միակ արդյունաբերական ձեռնարկությունն է: Թեղուտի հարցված ՏՏ 66%-ի շրջանում ՏՏ գոնե մեկ անդամ հանդիսացել է «Թեղուտ» ՓԲԸ-ի աշխատակից (ընդ որում ՏՏ 26%-ի շրջանում եղել են մեկից ավելի աշխատակիցներ): Շնողի հարցված ՏՏ միայն 31%-ի շրջանում է, որ ՏՏ գոնե մեկ անդամ հանդիսացել է «Թեղուտ» ՓԲԸ-ի աշխատակից («Թեղուտ» ՓԲԸ-ի աշխատակից հանդիսացող մեկից ավելի անդամներ եղել են հարցված ՏՏ 7%-ի շրջանում):

«Թեղուտ» ՓԲԸ-ում Թեղուտի բնակիչ աշխատակիցների քանակը կազմել է 148, իսկ Շնողի բնակիչ աշխատակիցներինը՝ 214 (Աղյուսակ 3.10): Երկու համայնքների պարագայում էլ գերակշռել են տղամարդ աշխատակիցները: Թեղուտի բնակիչ աշխատակիցների շրջանում գերակշռել են 18-29 և 50-59 տարիքային խմբի աշխատակիցները (համապատասխանաբար 43 և 39 մարդ), իսկ Շնողից աշխատակիցների շրջանում՝ 40-49, 18-29 և 50-59 տարիքային խմբերը (համապատասխանաբար 62, 57 և 55 մարդ): 2012թ.-ին 2010թ. համեմատ Թեղուտից կին աշխատակիցների քանակը աճել է 94%-ով, իսկ տղամարդկանցը՝ 16%-ով: Նույն ժամանակահատվածում Շնողից տղամարդ աշխատակիցների քանակը աճել է 46%-ով և աշխատանքի են անցել նաև կանայք (2010թ.-ին «Թեղուտ» ՓԲԸ-ում Շնողից կին աշխատակից չի եղել, իսկ 2012թ.-ին արդեն կար 9 կին աշխատակից):

¹ «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից գնումները համայնքներից ներկայացված են «Կյանքի որակ» բաժնում:

Աղյուսակ 3.10. «Թեղուտ» ՓԲԸ-ում թիրախային համայնքներից աշխատակիցների քանակ ըստ սեռի, 2012թ.

| Քանակ | Թեղուտ | | Շնող | | Թեղուտ և Շնող միասին | |
|--------------|--------|---------|------|---------|----------------------|---------|
| | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| Աշխատակիցներ | 31 | 117 | 9 | 205 | 40 | 322 |

Աղբյուր՝ «Թեղուտ» ՓԲԸ

Ձբաղվածություն ըստ աշխատանքի տեսակի

«Թեղուտ» ՓԲԸ-ում 2 համայնքների բնակիչների զբաղվածությունն ըստ աշխատանքի տեսակների քիչ թե շատ միանման է: Տղամարդիկ հիմնականում աշխատում են որպես շինարարության բանվոր (41% և 35%՝ Թեղուտից և Շնողից տղամարդ աշխատակիցների շրջանում համապատասխանաբար) և վարորդ: Կանայք հիմնականում ներգրավված են խոհարարության մեջ և դրան առնչվող աշխատանքներում (80% և 67%՝ Թեղուտից և Շնողից տղամարդ աշխատակիցների շրջանում համապատասխանաբար), ինչպես նաև գրասենյակային և բուժական աշխատանքներում:

Աղյուսակ 3.11. «Թեղուտ» ՓԲԸ-ում Թեղուտ և Շնող համայնքներից աշխատակիցների բաշխվածությունն ըստ աշխատանքի տեսակի և աշխատակիցների սեռի, 2012թ.

| Աշխատանքի տեսակ | Թեղուտ | | Շնող | | Թեղուտ և Շնող միասին | |
|--|--------|---------|------|---------|----------------------|---------|
| | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| Բանվոր (շինարարություն) | - | 41% | - | 35% | - | 37% |
| Վարորդ | - | 30% | - | 29% | - | 29% |
| Էլեկտրականությանն առնչվող մասնագիտություններ | - | 9% | - | 11% | - | 10% |
| Գրասենյակային աշխատակիցներ | 13% | 7% | 11% | 7% | 12% | 8% |
| Անվտանգություն | - | 5% | - | 9% | - | 7% |
| Խոհարարություն և խոհարարությանն առնչվող | 80% | - | 67% | - | 77% | - |
| Բուժքույր | 7% | - | 22% | - | 11% | - |
| Այլ | - | 8% | - | 9% | - | 9% |

Աղբյուր՝ «Թեղուտ» ՓԲԸ

Աշխատանքի վարձատրություն

2013թ. մարտի դրությամբ և Թեղուտի, և Շնողի բնակիչներից «Թեղուտ» ՓԲԸ-ում տղամարդ աշխատակիցներն ամենաշատն ընդգրկված են եղել ամսական 101-150 հազ. դրամ վարձատրության խմբում (համապատասխանաբար 44% և 38%): 200 հազ. դրամից բարձր են վարձատրվում Թեղուտի և Շնողի բնակիչ տղամարդ աշխատակիցներից համապատասխանաբար 10%-ը և 9%-ը:

Երկու համայնքի բնակիչներից էլ «Թեղուտ» ՓԲԸ-ում կին աշխատակիցների քանակն ամենամեծն է 51-70 հազ. դրամ վարձատրության խմբում (Թեղուտից 59% և Շնողից 67%, Աղյուսակ 3.12): Կին աշխատակիցների քանակով հաջորդ ամենախոշոր խումբը 51-70 հազ. դրամ վարձատրության միջակայքն է: «Թեղուտ» ՓԲԸ-ում ոչ Թեղուտի և ոչ Շնողի բնակիչ կին աշխատակիցների շրջանում ամսական 200 հազ. դրամից բարձր վարձատրվողներ չկան:

Աղյուսակ 3.12. «Թեղուտ» ՓԲԸ-ում Թեղուտ և Շնող համայնքներից աշխատակիցների բաշխվածությունն ըստ աշխատավարձի չափի և աշխատակիցների սեռի, 2012թ.

| Աշխատավարձի չափ, դրամ, միջին ամսական* | Թեղուտ | | Շնող | | Թեղուտ և Շնող միասին | |
|--|--------|---------|------|---------|-------------------------|---------|
| | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| 51-70 հազ. դրամ | 59% | 18% | 67% | 21% | 61% | 20% |
| 71-100 հազ. դրամ | 38% | 13% | 22% | 18% | 34% | 16% |
| 101-150 հազ. դրամ | 3% | 44% | 11% | 38% | 5% | 40% |
| 151-200 հազ. դրամ | - | 15% | - | 14% | - | 15% |
| 201 հազ. դրամ և բարձր | - | 10% | - | 9% | - | 10% |

*Չուտ (հարկերը հանած)
Աղբյուր՝ «Թեղուտ» ՓԲԸ

Աշխատավարձային ընդհանուր վճարներ

«Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից Թեղուտից աշխատակիցներին աշխատավարձային վճարումները 2011 և 2012 թվականներին աճել են տարեկան համապատասխանաբար 7%-ով և 31%-ով, իսկ Շնողից աշխատակիցների պարագայում՝ համապատասխանաբար 27%-ով և 51%-ով:

Աղյուսակ 3.13. «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից Թեղուտ և Շնող համայնքներից աշխատակիցներին ընդհանուր աշխատավարձային վճարումները*, 2010-2012թթ., տարեկան, հազ.դրամ

| Ընդամենը վճարներ, հազ. դրամ | 2010 | 2011 | 2012 |
|-------------------------------|----------------|----------------|----------------|
| Թեղուտ համայնքից աշխատակիցներ | 165,344 | 177,661 | 232,917 |
| Շնող համայնքից աշխատակիցներ | 195,473 | 248,796 | 378,569 |
| Ընդամենը | 360,817 | 426,457 | 611,486 |

* Աշխատավարձի և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ (պարգևավճարներ և այլ վճարներ), գուտ (հարկերը հանած):
Աղբյուր՝ «Թեղուտ» ՓԲԸ

Համայնքային բյուջե վճարումներ և համայնքին այլ գումարային հատկացումներ

2012թ.-ին 2010թ. համեմատ «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից Թեղուտի և Շնողի համայնքային բյուջե պարտադիր վճարումները աճել են համապատասխանաբար շուրջ 1,800%-ով և 920%-ով՝ կազմելով համապատասխանաբար 15.17 մլն և 26.61 մլն դրամ (Աղյուսակ 3.14): Հիմնական վճարը գոյացել է հողի վարձակալությունից:

Ընդհանուր առմամբ, 2010-2012թթ. ընթացքում «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից վճարների կշիռը

Թեղուտ և Շնող համայնքների բյուջետային եկամուտների մեջ աճող միտում է դրսևորել: 2012թ.-ին վերոնշյալ վճարները Թեղուտ համայնքի բյուջետային ընդամենը եկամուտների մեջ կազմել են 57% (7%՝ 2010թ.-ին): Նույն ժամանակահատվածում «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից վճարները Շնող համայնքի բյուջետային եկամուտների մեջ համեմատաբար ավելի ցածր կշիռ են ունեցել՝ 37% (2010թ.-ին կազմել է 5%¹):

Աղյուսակ 3.14. «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից Թեղուտ և Շնող համայնքների բյուջե վճարումներ ըստ տեսակների, 2010-2012թթ., տարեկան, հազ.դրամ

| Վճար, հազ. դրամ | Թեղուտ | | | Շնող | | | Թեղուտ և Շնող միասին | | |
|--------------------------|------------|--------------|---------------|--------------|---------------|---------------|----------------------|---------------|---------------|
| | 2010 | 2011 | 2012 | 2010 | 2011 | 2012 | 2010 | 2011 | 2012 |
| Հողի հարկ | 800 | 650 | 480 | 2,600 | 2,550 | 2,300 | 3,400 | 3,200 | 2,780 |
| Հողի վարձակալության վճար | - | 3,461 | 14,690 | - | 19,590 | 23,913 | - | 23,051 | 38,603 |
| Պահպանության վճար | - | - | - | - | - | 400 | - | - | 400 |
| Ընդամենը | 800 | 4,111 | 15,170 | 2,600 | 22,140 | 26,613 | 3,400 | 26,251 | 41,783 |

Աղբյուր՝ «Թեղուտ» ՓԲԸ

Համայնքային բյուջեի պարտադիր վճարներից բացի «Թեղուտ» ՓԲԸ-ն և «Մանես» բարեգործական հիմնադրամը² Թեղուտ և Շնող համայնքներին 2008-2012թթ. ընթացքում հատկացրել են նաև այլ գումարներ՝ համայնքների զարգացման նպատակով³, ներկայացված ստորև:

Համայնքների դպրոցներ

- 2008-2012թթ. «Թեղուտ» ՓԲԸ-ն Շնողի դպրոցի համար ձեռք է բերել 1.5 մլն դրամի գրեհական պիտույքներ և դպրոցական այլ պարագաներ: Նույն ժամանակահատվածում «Թեղուտ» ՓԲԸ-ն «Մանես» հիմնադրամի միջոցով դպրոցի համար ձեռք է բերել 13.4 մլն դրամի գույք:
- 2008-2012թթ. «Թեղուտ» ՓԲԸ-ն Թեղուտի դպրոցի համար ձեռք է բերել 865.2 հազ. դրամի գրեհական պիտույքներ և դպրոցական այլ պարագաներ: 2010 թ.-ին Թեղուտի դպրոցի հիմնանորոգման նպատակով 6.1 մլն. դրամի չափով նվիրաբերություն է արվել «Մանես» հիմնադրամի միջոցով:
- 2011-2012թթ. Թեղուտ և Շնող համայնքների դպրոցներին «Մանես» հիմնադրամի միջոցով ցուցաբերվել է նաև այլ ֆինանսական օժանդակություն՝ 1.2 մլն դրամ ընդհանուր ծավալով:

Թեղուտի մանկապարտեզ

- «Թեղուտ» ՓԲԸ-ն «Մանես» հիմնադրամի միջոցով 2011թ.-ին Թեղուտի նորակառույց մանկապարտեզի համար ձեռք է բերել 961 հազ. դրամի գույք:

¹ Հաշվարկված կշիռները չեն ընդգրկում «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից համայնքներին հատկացված այլ գումարները (պարտադիր վճարներից բացի)՝ համայնքների զարգացման նպատակով:

² Հիմնադրված 2005թ.-ին «Վալլեբա» խմբի նախաձեռնությամբ, որի նպատակն է Ալավերդի քաղաքի և մերձակա համայնքների կայուն զարգացումը:

³ Տեղեկությունների աղբյուր՝ «Թեղուտ» ՓԲԸ:

Թեղուտի մշակույթի տուն

- 2009թ.-ին «Թեղուտ» ՓԲԸ-ն «Մանես» հիմնադրամի միջոցով Թեղուտի մշակույթի տան վերանորոգման նպատակով հատկացրել է 29.04 մլն դրամ, իսկ 2010թ.-ին՝ 797 հազ. դրամի գույք:

Այլ հատկացումներ («Թեղուտ» ՓԲԸ-ի և «Մանես» հիմնադրամի կողմից)

- Շնող համայնքի գյուղամիջյան ճանապարհների լուսավորության համար՝ 3.04 մլն դրամ (2008թ.)
- Շնող համայնքի Էլ. սնուցման համակարգի նորոգման համար՝ 330 հազ. դրամ (2012թ.)
- Չայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի հովանու ներքո գործող «Ծիծեռնակ» ճամբարում Շնող համայնքի 33 երեխաների հանգիստը կազմակերպելու համար՝ 1.65 մլն դրամ (2012թ.)
- «Տիկնիկային արվեստի գործիչների միջազգային միության հայկական կենտրոն» ՅԿ-ի կողմից Շնող և Թեղուտ համայնքների մշակույթի տներում «Քեֆ անողին քեֆ չի պակսիլ» ներկայացման ցուցադրման համար՝ 360 հազ. դրամ (2012թ.)
- «ԱՆԿՅՈՒՆ գումարած 3» և «Ֆորտունա» հեռուստաընկերությունների եթերն ապահովելու համար Սանահին-Օծուն-և Սանահին-Ախթալա-Շնող-Թեղուտ հեռուստատեսային կապուղու ստեղծման ծրագրի իրականացման նպատակով նյութերի և սարքավորումների ձեռքբերման և մոնտաժման համար՝ 41 մլն դրամ (2012թ.)

Ընդհանուր առմամբ, 2008-2012թթ. «Թեղուտ» ՓԲԸ-ն և «Մանես» բարեգործական հիմնադրամը Թեղուտ և Շնող համայնքներին համայնքների զարգացման նպատակով հատկացրել են շուրջ 100.2 մլն դրամ ֆինանսական օժանդակություն:

Գյուղապետարաններ

2012թ.-ին Թեղուտի գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակը կազմել է 9 (որոնցից 7-ը՝ կին), իսկ Շնողինը՝ 25 մարդ (այդ թվում՝ 20 կին): 2010-2012թթ. Թեղուտի գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակն աճել է 1-ով, իսկ Շնողինը՝ մնացել է անփոփոխ: 2012թ.-ին Թեղուտի գյուղապետարանում միջին ամսական աշխատավարձը կազմել է 65,000 դրամ, իսկ Շնողի գյուղապետարանում՝ 53,000 դրամ:

Աղյուսակ 3.15. Թեղուտ և Շնող համայնքների գյուղապետարանների աշխատակիցների քանակ, 2012թ.

| Քանակ | Թեղուտ | | Շնող | |
|--------------|--------|---------|------|---------|
| | Կին | Տղամարդ | Կին | Տղամարդ |
| Աշխատակիցներ | 7 | 2 | 20 | 5 |

Աղբյուր՝ գյուղապետարաններ

Դպրոցներ

2012թ.-ին Թեղուտի դպրոցի աշխատակիցների թվաքանակը կազմել է 25 (Աղյուսակ 3.16), որոնցից 20-ը՝ կին, իսկ Շնողինը՝ 58, այդ թվում՝ 39 կին: 2010-2012թթ. Շնողի դպրոցի աշխատակիցների թվաքանակն աճել է 1-ով, իսկ Թեղուտինը՝ մնացել է անփոփոխ: 2013թ. մարտի դրությամբ երկու համայնքների դպրոցներում էլ ուսուցչի թափուր հաստիք չի եղել, իսկ դասավանդող ուսուցիչները բոլորն ունեն բարձրագույն կրթություն:

Աղյուսակ 3.16. Թեղուտ և Շնող համայնքների դպրոցների աշխատակիցների քանակ, 2012թ.

| Քանակ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|--------------------------|--------|------|----------------------|
| Ուսուցիչներ | 16 | 46 | 62 |
| Վարչատնտեսական անձնակազմ | 9 | 12 | 21 |

Աղբյուր՝ համայնքների դպրոցներ

Մանկապարտեզներ

2012թ.-ին Թեղուտի մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը կազմել է 11, իսկ Շնողինը՝ 25, ընդ որում՝ բոլորը կին: 2010-2012թթ. Թեղուտի մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակն աճել է 2-ով, իսկ Շնողինը՝ 3-ով:

Աղյուսակ 3.17. Թեղուտ և Շնող համայնքների մանկապարտեզների աշխատակիցների քանակ, 2012թ.

| Քանակ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|--------------------------|--------|------|----------------------|
| Դաստիարակներ | 5 | 11 | 16 |
| Վարչատնտեսական անձնակազմ | 6 | 14 | 20 |

Աղբյուր՝ համայնքների մանկապարտեզներ

Շնողի բժշկական ամբուլատորիա

2013թ.-ի մարտի դրությամբ Շնողի բժշկական ամբուլատորիայի աշխատակիցների թվաքանակը կազմել է 13 (որոնցից 12-ը՝ կին): Աշխատակազմը բաղկացած է 2 ընտանեկան բժշկուհուց, 3 ընտանեկան և 1 դպրոցական բուժքույրից, 1 լաբորատոր օգնականից, Թեղուտի բուժկայանի 1 բուժքույրից և 1 օգնականից և վարչական 4 աշխատակիցներից: 2010-2012թթ. ամբուլատորիայի աշխատակիցների թվաքանակը մնացել է անփոփոխ:

Աղյուսակ 3.18. Շնողի բժշկական ամբուլատորիայի աշխատակիցների քանակ, 2013թ. մարտ

| Աշխատանքի բնույթ | Աշխատակիցների քանակ |
|------------------|---------------------|
| Մասնագիտական | 9 |
| Վարչական | 4 |

Աղբյուր՝ Շնողի բժշկական ամբուլատորիա

Տեղական բիզնեսներ

Եվ Թեղուտում, և Շնողում տեղական հիմնական բիզնեսները խանութներն են, որոնց մեծ մասը՝ մթերային (Թեղուտում՝ 4, Շնողում՝ 10): Համայնքներում կան նաև մի քանի հագուստի և տնտեսական իրերի խանութներ և վարսավիրանոց: Մթերային խանութները մատակարարվում են հիմնականում նույն մատակարարների կողմից, որոնք համայնքների խանութների համար ընդհանուր առաքում են կազմակերպում: Հագուստի և տնտեսական ապրանքների խանութների տները իրենց ապրանքը ձեռք են բերում հիմնականում Երևանից (մասամբ նաև տարածաշրջանի քաղաքներից, օրինակ՝ Վանաձոր): Ըստ խանութպանների՝ համայնքի բնակիչներին ապառիկ վաճառքը կազմում է օրական վաճառքի ծավալների միջինում մինչև 30%-ը, որը հիմնականում պատշաճ կերպով մարվում է:

«Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից համեմատաբար ավելի մեծ ծավալով գնումներ են կատարվում Թեղուտի խանութներից, քանի որ Շնողը աշխարհագրորեն ավելի հեռու է «Թեղուտ» ՓԲԸ-ի գրասենյակից և գործունեության հիմնական տեղակայումից: Թեղուտի մթերային խանութներից երկուսը հիմնվել են վերջին տարիներին՝ «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության մեկնարկից հետո, և խանութպանները նաև նշում են վերոնշյալ գործոնը՝ որպես խանութների հիմնման գլխավոր պատճառներից:

Գյուղական կանանց խորհուրդ

Շնողում և Թեղուտում գործում են գյուղական կանանց խորհուրդներ (ԳԿԽ), որոնց գործունեությունն ուղղված է համայնքների կանանց զբաղվածության ապահովմանը և կարողությունների զարգացմանը (տե՛ս Հավելված III):

4. Կյանքի որակ

Կանխիկ եկամուտ

Աղբյուրներ

Չարցված SS շրջանում 2 համայնքներում էլ սեփական SS գյուղատնտեսական աշխատանքների հետ կապ չունեցող կանխիկ եկամտի ամենատարածված աղբյուրը վարձու աշխատանքից աշխատավարձն է (Թեղուտում համեմատաբար ավելի շատ՝ SS 84%-ի շրջանում, Շնողում՝ 61%-ի): Չաջորդ ամենատարածված աղբյուրը պետության կողմից վճարներն են (SS 43%-ի և 51%-ի շրջանում՝ Թեղուտում և Շնողում համապատասխանաբար): Արտերկրից դրամական փոխանցումները, Չայաստանում բնակվող բարեկամներից դրամական օգնությունը և սեփական բիզնեսից եկամուտը 2 համայնքներում էլ համեմատաբար քիչ են տարածված. յուրաքանչյուրն առկա է SS մինչև 5%-ի շրջանում: Շնողում կանխիկ եկամտի գոնե մեկ աղբյուր ունեն հարցված SS 93%-ը, իսկ Թեղուտում՝ բոլորը:

Աղյուսակ 4.1. Կանխիկ եկամուտների տարբեր աղբյուրների առկայություն, համայնքների SS կշիռ, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Կանխիկ եկամտի աղբյուրներ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|---|----------------|------|----------------------|
| | <i>SS կշիռ</i> | | |
| Աշխատավարձ | 84% | 61% | 66% |
| Պետության կողմից վճարներ (ընտանեկան նպաստ, կենսաթոշակ և այլն) | 43% | 51% | 49% |
| Փոխանցումներ արտասահմանի բարեկամներից | 5% | 4% | 4% |
| Եկամուտ սեփական բիզնեսից | 1% | 5% | 4% |
| Դրամական օգնություն Չայաստանում բնակվող բարեկամներից | - | 0.2% | 0.2% |
| Կանխիկ եկամտի աղբյուրի բացակայություն | - | 7% | 5% |
| Այլ | 1% | 4% | 3% |

Աղբյուր՝ SS հարցում

Եկամտի չափ

Չարցված SS շրջանում Շնողում միջին ամսական կանխիկ եկամտի ամենատարածված միջակայքը 36-70 հազ. դրամն է (SS 25.5%-ը, Աղյուսակ 4.2), իսկ Թեղուտում՝ 36-70 և 71-110 հազ. դրամ միջակայքերը (յուրաքանչյուրը՝ 19.4%): Նվազագույն՝ մինչև 35 հազ. դրամ ամսական կանխիկ եկամուտ ունեն հարցված SS 5.2%-ը՝ Թեղուտում և 16.1%-ը՝ Շնողում: Երկու համայնքներում էլ 300 հազ. դրամից բարձր միջին ամսական կանխիկ եկամուտ ունեն հարցված SS ընդամենը 2.9%-ը:

Աղյուսակ 4.2. Համայնքների SS բաշխվածությունը ըստ ամսական կանխիկ եկամտի չափի, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| SS ամսական կանխիկ եկամտի միջին չափ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|------------------------------------|--------|-------|----------------------|
| Մինչև 35,000 դրամ | 5.2% | 16.1% | 13.5% |
| 36,000-70,000 դրամ | 19.4% | 25.5% | 24.1% |
| 71,000-110,000 դրամ | 19.4% | 18.4% | 18.6% |
| 111,000-150,000 դրամ | 18.7% | 15.6% | 16.3% |
| 151,000-200,000 դրամ | 18.7% | 13.6% | 14.8% |
| 201,000-300,000 դրամ | 15.7% | 7.8% | 9.7% |
| 301,000-400,000 դրամ | 2.2% | 1.8% | 1.9% |
| 401,000-500,000 դրամ | - | 0.7% | 0.5% |
| 501,000-600,000 դրամ | 0.7% | 0.2% | 0.4% |
| 601,000-700,000 դրամ | - | 0.2% | 0.2% |

Աղբյուր՝ SS հարցում

Գյուղատնտեսական աշխատանքներ

Տեսակներ

Հարցված SS շրջանում Թեղուտում ամենատարածված գյուղատնտեսական աշխատանքը անասնապահությունն է (SS 54%-ը), իսկ Շնողում՝ հողագործությունը (SS 41%-ը): Գյուղատնտեսական աշխատանքներով ընդհանրապես չեն զբաղվում SS 19%-ը և 38%-ը Թեղուտում և Շնողում համապատասխանաբար: Անտառից փայտ է հավաքում հարցված SS 35%-ը և 19%-ը՝ համապատասխանաբար Թեղուտից և Շնողից, իսկ պտուղ, հատապտուղ կամ սունկ՝ Թեղուտի SS 17%-ը և Շնողի SS 4%-ը:

Աղյուսակ 4.3. Գյուղատնտեսական աշխատանքների կատարում ըստ տեսակների, համայնքների SS կշիռ, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Գյուղատնտեսական աշխատանքների տեսակներ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|---|--------|------|----------------------|
| Գյուղատնտեսական աշխատանքների բացակայություն | 19% | 38% | 34% |
| Անասնապահություն | 54% | 34% | 38% |
| Հողագործություն (միրգ, բանջարեղեն) | 43% | 41% | 42% |
| Անտառից փայտի հավաքում | 35% | 19% | 23% |
| Անտառից պտղի, հատապտղի կամ սնկի հավաքում | 17% | 4% | 7% |
| Այլ | 0.7% | 0.4% | 0.5% |

Աղբյուր՝ SS հարցում

Եվ Թեղուտում, և Շնողում հարցված SS բացարձակ մեծամասնության համար գյուղատնտեսական աշխատանքները եկամտի հիմնական աղբյուր չեն հանդիսանում, ինչպես ներկայացված է հաջորդիվ աղյուսակում:

Աղյուսակ 4.4. Հողագործությունը և անասնապահությունը որպես եկամտի հիմնական աղբյուրներ ունեցող SS կշիռ ըստ համայնքների, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Եկամտի հիմնական աղբյուր | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|------------------------------------|--------|------|----------------------|
| Հողագործություն (միրգ, բանջարեղեն) | 2.8% | 1.6% | 1.9% |
| Անասնապահություն | 4.8% | 3.6% | 3.9% |

Աղբյուր՝ SS հարցում

Արտադրանքի ծավալներ և վաճառք¹

Թեղուտում հարցված SS շրջանում ամենատարածված գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը ձվին է՝ SS 32%, որին հաջորդում են միս և միրգ կամ հատապտուղ արտադրող տնային տնտեսությունները (համատասխանաբար 26% և 25%): Շնողի հարցված SS շրջանում գերակշռող գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը մրգինը (հատապտուղինը) և բանջարեղենին է՝ (համատասխանաբար 30% և 25%):

Աղյուսակ 4.5. Գյուղատնտեսական արտադրանք արտադրող համայնքների SS կշիռ* ըստ արտադրանքի տեսակների, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Գյուղատնտեսական արտադրանք | Թեղուտ | Շնող |
|---------------------------|--------|------|
| Ձու | 32% | 11% |
| Միս | 26% | 9% |
| Միրգ և հատապտուղ | 25% | 30% |
| Կաթ | 18% | 14% |
| Բանջարեղեն | 17% | 25% |
| Պանիր | 12% | 13% |

* Հաշվարկված է հարցված SS քանակի վրա:

Աղբյուր՝ SS հարցում

Ըստ հարցումների՝ 1 արտադրող SS հաշվով գյուղատնտեսական արտադրանքի տարեկան բնեղեն միջին ծավալի վերաբերյալ Շնողի SS տրամադրած ցուցանիշները գերազանցում են Թեղուտի ցուցանիշներին:

Աղյուսակ 4.6. 1 արտադրող SS հաշվով գյուղատնտեսական արտադրանքի տարեկան բնեղեն միջին ծավալներ, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Գյուղատնտեսական արտադրանք | Թեղուտ | Շնող |
|---------------------------|--------|------|
| Միրգ և հատապտուղ (կգ) | 191 | 674 |
| Բանջարեղեն (կգ) | 99 | 208 |

¹ Ենթադրվում է, որ SS հարցումների արդյունքներն ամբողջապես չեն արտացոլում հարցված SS գյուղատնտեսական արտադրանքի վերաբերյալ տվյալները (արտադրող SS քանակ, արտադրանքի և վաճառքի ծավալներ), քանի որ հարցված SS մի մասը զգուշավորությամբ է մոտեցել պատասխաններին և մասնակիորեն է տրամադրել նման տվյալներ կամ ընդհանրապես չի տրամադրել: Գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակների ծավալների վերաբերյալ տեղեկատվություն տրված է «Գյուղատնտեսություն» բաժնում:

| Գյուղատնտեսական արտադրանք | Թեղուտ | Շնող |
|---------------------------|--------|------|
| Միս (կգ) | 84 | 128 |
| Ձուլ (հատ) | 313 | 462 |
| Կաթ (լիտր) | 447 | 1203 |
| Պանիր (կգ) | 70 | 119 |

Աղբյուր՝ SS հարցում

Վաճառք

Ըստ հարցված սեփական գյուղատնտեսական արտադրանք ունեցող տնային տնտեսությունների՝ իրենց կողմից վաճառվող ամենատարածված արտադրանքը միսն է (SS 51% և 58%՝ Թեղուտում և Շնողում համապատասխանաբար): Ամենաքիչ տարածվածը բանջարեղենի վաճառքն է՝ SS 4%-ը Թեղուտում և 6%-ը՝ Շնողում, ներկայացված հաջորդիվ:

Աղյուսակ 4.7. Սեփական գյուղատնտեսական արտադրանք վաճառող SS քանակ ըստ համայնքների և դրանց կշիռն արտադրողների մեջ, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Գյուղատնտեսական արտադրանք | Թեղուտ | | Շնող | |
|---------------------------|------------------|-----------------------------------|------------------|-----------------------------------|
| | Վաճառող SS քանակ | Վաճառող SS կշիռն արտադրողների մեջ | Վաճառող SS քանակ | Վաճառող SS կշիռն արտադրողների մեջ |
| Միրգ և հատապտուղ | 6 | 17% | 22 | 15% |
| Բանջարեղեն | 1 | 4% | 7 | 6% |
| Միս | 19 | 51% | 25 | 58% |
| Ձուլ | 4 | 9% | 7 | 13% |
| Կաթ | 2 | 8% | 13 | 18% |
| Պանիր | 5 | 28% | 13 | 21% |

Աղբյուր՝ SS հարցում

Ըստ հարցված տնային տնտեսությունների՝ ստացված գյուղատնտեսական արտադրանքների վաճառքի մեջ (որպես արտադրված ծավալից մասնաբաժին) ամենաշատը գերակշռում է մսի վաճառքը (76%՝ Թեղուտում և 86%՝ Շնողում, Աղյուսակ 4.8): Շնողում վաճառքի հաջորդ ամենամեծ կշիռ ունեցող արտադրանքները կաթը և ձուլն են (համապատասխանաբար 68% և 67%), իսկ Թեղուտում՝ միրգ և հատապտուղը և պանիրը (համապատասխանաբար 68% և 63%): Ընդհանուր առմամբ, 2 համայնքներում էլ հարցված SS շրջանում միայն Թեղուտի բանջարեղեն և կաթ արտադրողների շրջանում է արտադրանքի 50%-ից ցածր ծավալ իրացվում (արտադրանքի համապատասխանաբար 35%-ը և 48%-ը):

Աղյուսակ 4.8. Գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի մասնաբաժին արտադրանքի ընդամենը ծավալի մեջ (%), 1 SS հաշվով, միջին տարեկան, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Վաճառքի % ամբողջ արտադրանքի ծավալի մեջ | Թեղուտ | Շնող |
|--|--------|------|
| Միրգ և հատապտուղ | 68% | 60% |
| Բանջարեղեն | 35% | 60% |
| Միս | 76% | 86% |
| Ձու | 51% | 67% |
| Կաթ | 48% | 68% |
| Պանիր | 63% | 64% |

Աղբյուր՝ SS հարցում

«Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից գնումներ համայնքից

Թեղուտ և Շնող համայնքներից «Թեղուտ» ՓԲԸ-ն կատարում է գյուղմթերքի (հիմնականում՝ պանիր, միս, բանջարեղեն) և շինանյութերի և տնտեսական ապրանքների գնումներ: 2012թ.-ին տնային տնտեսությունների քանակում ամենամեծ դիվերսիֆիկացիան առկա է մսի գնման մեջ՝ 21 SS երկու համայնքներից (ընդ որում՝ 2010թ.-ին վերոնշյալ տնային տնտեսությունները եղել են ընդամենը 4-ը):

2010թ. համեմատ 2012թ.-ին պանրի գնման բնեղեն ծավալները կրճատվել են գրեթե 50%-ով (5.3 տ-ից՝ 2.7տ), իսկ մսի գնման ծավալները ավելի քան 12-ապատիկ աճ են արձանագրել (0.4 տ-ից՝ 5.7տ): Գումարային ծավալներով՝ 2010թ. համեմատ 2012թ.-ին պանրի գնումը շուրջ մեկ երրորդով կրճատվել է, շինանյութերի և տնտ. ապրանքների գնումը աճել է 87%-ով, իսկ մսի գնումը՝ ավելի քան 15-ապատիկ:

Աղյուսակ 4.9. «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից Թեղուտ և Շնող համայնքներից սննդամթերքի և այլ ապրանքների և ծառայությունների գնման գումարային և բնեղեն ծավալներ, 2012թ.

| Ապրանք (արտադրանք) | Թեղուտ և Շնող | | |
|------------------------------|---------------|--------------|------------------------------|
| | SS քանակ | Բնեղեն ծավալ | Գումարային ծավալ (հազ. դրամ) |
| Պանիր | 3 | 2.7 տ | 4,343 |
| Միս | 21 | 5.7 տ | 13,773 |
| Բանջարեղեն | 6 | 1.3 տ | 543 |
| Շինանյութեր և տնտ. ապրանքներ | 15 | | 37,416 |
| Ընդամենը | | | 56,075 |

Աղբյուր՝ «Թեղուտ» ՓԲԸ

Անտառից հավաքված բարիքի բնեղեն ծավալներ

Ըստ հարցված SS՝ անտառից բարիքներ հավաքելու առումով ամենաշատը տարածված է փայտի

հավաքման պրակտիկան, ընդ որում՝ Թեղուտի փայտ հավաքող SS կշիռը կրկնակի գերազանցում է Շնողի վերոնշյալ ցուցանիշին (SS համապատասխանաբար 38% և 19%): Միրգ և հատապտուղ հավաքելու պրակտիկան նույնպես գերակշռում է Թեղուտի տնային տնտեսությունների շրջանում՝ 11% համեմատած Շնողի SS 3%-ի հետ:

Աղյուսակ 4.10. Թեղուտի և Շնողի բնակիչների կողմից անտառից հավաքված բարիքների բնեղեն ծավալներ և ներգրավված SS կշիռ, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Անտառից հավաքված բարիքներ | Թեղուտ | | Շնող | |
|---------------------------|-----------------------|-----------------|-----------------------|-----------------|
| | Ընդամենը բնեղեն ծավալ | SS քանակ (կշիռ) | Ընդամենը բնեղեն ծավալ | SS քանակ (կշիռ) |
| Միրգ և հատապտուղ (կգ) | 1,545 | 16 (11%) | 379 | 16 (3%) |
| Սունկ (կգ) | 190 | 10 (7%) | 164 | 2 (0.4%) |
| Փայտ (խմ) | 558 | 55 (38%) | 977 | 94 (19%) |

Աղբյուր՝ SS հարցում

1 SS հաշվով մրգի և հատապտղի հավաքման տարեկան միջին ծավալի վերաբերյալ Թեղուտի հարցված SS տրամադրած ցուցանիշները շուրջ քառակի գերազանցում են Շնողի ցուցանիշներին (համապատասխանաբար 97 կգ և 24 կգ), ներկայացված Աղյուսակ 4.11-ում հաջորդիվ: Փայտի հավաքման վերոնշյալ ցուցանիշը 2 համայնքներում էլ նույնն է՝ տարեկան 10 խմ: Ընդհանուր առմամբ, տնային տնտեսություններն ունեն մերձակա անտառից տարեկան մինչև 8խմ անվճար թափուկ վառելափայտ հավաքելու իրավունք (ըստ օրենսդրությամբ սահմանված համապատասխան կարգի¹):

Աղյուսակ 4.11. Թեղուտի և Շնողի բնակիչների կողմից անտառից հավաքված բարիքների բնեղեն ծավալներ, 1 SS հաշվով, միջին տարեկան, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Անտառից հավաքված բարիքներ | Թեղուտ | Շնող |
|---------------------------|--------|------|
| Միրգ և հատապտուղ (կգ) | 97 | 24 |
| Սունկ (կգ) | 19 | 82 |
| Փայտ (խմ) | 10 | 10 |

Աղբյուր՝ SS հարցում

Կանխիկ եկամտի աղբյուրների կշիռներ

Համայնքներում հարցված SS շրջանում Թեղուտում աշխատավարձային կանխիկ եկամուտ չունեն SS շուրջ 13%-ը (Աղյուսակ 4.12), իսկ Շնողում՝ մոտ 40%-ը (Աղյուսակ 4.13): Առկայության պարագայում այն Թեղուտի SS ավելի քան երեք քառորդ SS շրջանում կազմում է

¹ «Հայաստանի Հանրապետության անտառամերձ բնակավայրերում բնակվող ընտանիքների կողմից ոչ արտադրական (ոչ արդյունագործական) նպատակներով օգտագործվող թափուկ վառելափայտի մթերման համար բնօգտագործման վճարի գծով արտոնություն սահմանելու մասին» ՀՀ կառավարության 1535-Ն որոշում (27 հոկտեմբեր, 2011), «Ցանկ ոչ արտադրական նպատակներով անվճար թափուկ վառելափայտ ձեռք բերելու արտոնություն ստացող՝ անտառների անմիջական հարևանությամբ գտնվող բնակավայրերի» (Հավելված ՀՀ տարածքային կառավարման նախարարի և 2011 թվականի նոյեմբերի 30-ի N 144-Ա, ՀՀ գյուղատնտեսության նախարարի և 2011 թվականի նոյեմբերի 29-ի N 227-Ա ՀՀ բնապահպանության նախարարի 2011թ. նոյեմբերի 29-ի N 254-Ա համատեղ հրամանի):

ընդամենը կանխիկ եկամուտների 75%-ից ավելին, մինչդեռ վերոնշյալ ցուցանիշը թեղուտի հարցված SS ընդամենը կեսի շրջանում է: Ընդհանուր առմամբ, աշխատավարձային կանխիկ եկամուտները 2 համայնքներում էլ հարցված SS շրջանում առկա ամենատարածված աղբյուրն են:

Երկու համայնքներում էլ հարցված SS մեծամասնության շրջանում սեփական բիզնեսից (ոչ գյուղատնտեսական աշխատանքներ) կանխիկ եկամուտներ առկա չեն (SS 99.3% և 95.5%` թեղուտում և Շնողում համապատասխանաբար):

Պետության կողմից վճարներ (ընտանեկան նպաստ, կենսաթոշակ և այլն) համեմատաբար ավելի շատ առկա են թեղուտի հարցված SS շրջանում (60.4%` համեմատած Շնողի SS 46.9%-ի հետ): Առկայության պարագայում դրանք ընդամենը կանխիկ եկամուտների մեջ 75%-ից բարձր կշիռ ունեն Շնողի SS մոտ մեկ քառորդի շրջանում, մինչդեռ թեղուտում վերոնշյալ ցուցանիշը վերաբերում է SS միայն մոտ 7%-ին:

Եվ թեղուտում, և Շնողում հարցված SS գերակշռող մեծամասնությունը արտերկրի կամ Զայաստանի բարեկամներից ստացված փոխանցումներ որպես կանխիկ եկամտի աղբյուր չունի (SS 95.8% և 96.3%` թեղուտում և Շնողում համապատասխանաբար):

Երկու համայնքներում էլ հարցված SS շրջանում գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից ստացված եկամուտներ հիմնականում առկա չեն (թեղուտի SS 11.8% և Շնողի SS 14%): Առկայության պարագայում դրանք հիմնականում կազմում են SS ընդամենը կանխիկ եկամուտների մինչ մեկ քառորդը: Նմանապես, համայնքների SS գերակշիռ հատվածի շրջանում առկա չէ անտառից հավաքված բարիքների վաճառքից ստացված կանխիկ եկամուտ (թեղուտի SS 96.5%-ի շրջանում և Շնողի SS 99.8%-ի):

Աղյուսակ 4.12. Կանխիկ եկամտի տարբեր աղբյուրների կշիռն ընդամենը կանխիկ եկամտի մեջ, թեղուտի SS բաշխվածություն, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Եկամտի աղբյուրի կշիռն ընդամենը կանխիկ եկամուտի մեջ | Առկա չէ | 1%-25% | 26%-50% | 51%-75% | 76%-100% |
|---|----------------|--------|---------|---------|----------|
| <i>Կանխիկ եկամտի աղբյուր</i> | <i>SS կշիռ</i> | | | | |
| Աշխատավարձեր | 13.2% | 1.4% | 5.6% | 3.5% | 76.3% |
| Եկամուտներ սեփական բիզնեսից | 99.3% | - | - | 0.7% | - |
| Պետության կողմից վճարներ (ընտանեկան նպաստ, կենսաթոշակ և այլն) | 60.4% | 26.4% | 6.3% | - | 6.9% |
| Փոխանցումներ արտասահմանի և Զայաստանի բարեկամներից | 95.8% | - | 1.4% | 1.4% | 1.4% |
| Գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից ստացվող եկամուտներ | 88.2% | 9.0% | 1.4% | - | 1.4% |
| Անտառից հավաքված բարիքների վաճառքից ստացվող եկամուտներ | 96.5% | 2.1% | - | 0.7% | 0.7% |

Աղբյուր` SS հարցում

Աղյուսակ 4.13. Կանխիկ եկամտի տարբեր աղբյուրների կշիռն ընդամենը կանխիկ եկամտի մեջ, Շնողի SS բաշխվածություն, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Եկամտի աղբյուրի կշիռն ընդամենը կանխիկ եկամտի մեջ | Առկա չէ | 1%-25% | 26%-50% | 51%-75% | 76%-100% |
|---|----------------|--------|---------|---------|----------|
| <i>Կանխիկ եկամտի աղբյուր</i> | <i>SS կշիռ</i> | | | | |
| Աշխատավարձեր | 35.9% | 1.3% | 6.7% | 5.4% | 50.7% |
| Եկամուտներ սեփական բիզնեսից | 95.5% | 0.2% | 1.5% | 0.4% | 2.4% |
| Պետության կողմից վճարներ (ընտանեկան նպաստ, կենսաթոշակ և այլն) | 46.9% | 18.5% | 8.0% | 2.2% | 24.5% |
| Փոխանցումներ արտասահմանի և Հայաստանի բարեկամներից | 96.3% | 1.1% | 1.5% | - | 1.1% |
| Գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից ստացվող եկամուտներ | 86.0% | 8.4% | 1.1% | 0.4% | 4.1% |
| Անտառից հավաքված բարիքների վաճառքից ստացվող եկամուտներ | 99.8% | - | 0.2% | - | - |

Աղբյուր՝ SS հարցում

Ծախսեր

Սպառողական հիմնական ծախսեր

Եվ Թեղուտում, և Շնողում հարցված SS շրջանում սպառողական հիմնական ծախսերի առաջնային եռյակում են սնունդը (համապատասխանաբար 42.3% և 34.7%), հագուստը (համապատասխանաբար 17.2.3% և 14.7%) և առողջապահությունը (11% յուրաքանչյուր համայնքում): Վերոնշյալ 3 ծախսերը միասին կազմում են Թեղուտի հարցված SS սպառողական ընդամենը ծախսերի միջինում 71%-ը, իսկ Շնողի՝ 60%-ը:

Աղյուսակ 4.14. SS սպառողական հիմնական ծախսերի կշիռներ, միջին տարեկան, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| <i>Սպառողական հիմնական ծախսեր</i> | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|--|---------------|-------------|-----------------------------|
| Սննդամթերք | 42.3% | 34.7% | 36.2% |
| Հագուստ | 17.2% | 14.7% | 15.2% |
| Առողջապահական ծախսեր | 11% | 11% | 11% |
| Կոմունալ ծախսեր (Էլ. Էներգիա, ջուր, գազ և նմանատիպ ծախսեր) | 6.5% | 10% | 9.3% |
| Տրանսպորտ | 6.4% | 8.1% | 7.8% |
| Ծխախոտ | 5.2% | 5.4% | 5.4% |
| Կրթություն | 4.7% | 3.2% | 3.5% |
| Անասնապահական ծախսեր | 2.7% | 2.8% | 2.8% |
| Հանգիստ և ժամանց | 2% | 5.8% | 4.5% |

| Սպառողական հիմնական ծախսեր | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|----------------------------|--------|------|----------------------|
| Ալկոհոլ | 1.3% | 1.8% | 1.7% |
| Հողամշակման ծախսեր | 0.8% | 2.5% | 2.1% |

Աղբյուր՝ SS հարցում

Համայնքների հարցված SS մեծամասնությունը նշել է, որ ընտանիքի եկամուտները չեն բավականացնում սպառողական բոլոր ծախսերի ֆինանսավորման համար (SS 79%-ը՝ Թեղուտում և 90%-ը՝ Շնողում, Աղյուսակ 4.15): 2 համայնքներում էլ ոչ լիարժեք կատարվող ծախսերի առումով առաջին տեղերում են սննդամթերքը (SS 63%-ը՝ Թեղուտում և 76%-ը՝ Շնողում), հագուստը (SS 61%-ը և 59%-ը համապատասխանաբար Թեղուտում և Շնողում) և առողջապահական ծախսերը (SS 39%-ը՝ Թեղուտում և 55%-ը՝ Շնողում):

SS եկամուտները համեմատաբար բավարար են հողամշակման և անասնապահական ծախսերը լիարժեք կատարելու առումով. հողամշակման ծախսերը լիարժեք չեն կարողանում կատարել SS 2%-ը և 5%-ը՝ Թեղուտում և Շնողում համապատասխանաբար, իսկ անասնապահական ծախսերը՝ SS 6%-ը և 7%-ը՝ համապատասխանաբար Թեղուտում և Շնողում:

Աղյուսակ 4.15. SS եկամուտների ոչ բավարար լինելու պատճառով լիարժեք չիրականացվող սպառողական հիմնական ծախսեր, SS կշիռ, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Ծախս | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|----------------------|--------|------|----------------------|
| Սննդամթերք | 63% | 76% | 74% |
| Հագուստ | 61% | 59% | 59% |
| Կոմունալ ծախսեր | 15% | 28% | 25% |
| Կրթություն | 12% | 10% | 11% |
| Հողամշակման ծախսեր | 2% | 5% | 4% |
| Անասնապահական ծախսեր | 6% | 7% | 7% |
| Ծխախոտ | 12% | 10% | 10% |
| Ալկոհոլ | 3% | 1% | 2% |
| Առողջապահական ծախսեր | 39% | 55% | 51% |
| Տրանսպորտ | 11% | 23% | 20% |
| Հանգիստ և ժամանց | 17% | 26% | 24% |

Աղբյուր՝ SS հարցում

Կենցաղային գույք

Համայնքներում հարցված SS բացարձակ մեծամասնությունն ունեն սառնարան (միջինում SS 89%-ը), հեռուստացույց (SS 98%-ը) և լվացքի մեքենա (միջինում SS 80%-ը): Համակարգիչ առկա է SS 44%-ում՝ Թեղուտում և 29%-ում՝ Շնողում: Երկու համայնքներում էլ SS միայն 2%-ի շրջանում է առկա ջեռուցման համակարգ:

Աղյուսակ 4.16. Հիմնական կենցաղային գույքով SS ապահովվածությունը, SS կշիռ, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Առկայություն | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|-------------------------------|--------|------|----------------------|
| Սառնարան | 92% | 85% | 87% |
| Հեռուստացույց | 98% | 98% | 98% |
| Ջեռուցման համակարգ | 2% | 2% | 2% |
| Լվացքի մեքենա | 86% | 73% | 76% |
| Համակարգիչ (ներառյալ նոթբուք) | 44% | 29% | 33% |

Աղբյուր՝ SS հարցում

2 համայնքներում էլ տնային տնտեսությունների մեծամասնությունը կենցաղային գույքի վերոնշյալ տեսակները ձեռք է բերել ավելի քան 3 տարի առաջ: Քննարկված գույքի 5 տեսակների շարքում վերջին 3 տարիներին ձեռքբերման համեմատաբար ավելի մեծ կշիռ ունեն համակարգիչները (SS 33%՝ Թեղուտում և 20%՝ Շնողում) և լվացքի մեքենաները (SS 30%՝ Թեղուտում և 19%՝ Շնողում):

Աղյուսակ 4.17. Կենցաղային գույքի ձեռքբերում 2010-2012թթ. ընթացքում, SS կշիռ, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Գույք | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|-------------------------------|--------|------|----------------------|
| Սառնարան | 25% | 13% | 15% |
| Հեռուստացույց | 7% | 8% | 8% |
| Ջեռուցման համակարգ | 0.7% | 0.2% | 0.3% |
| Լվացքի մեքենա | 30% | 19% | 22% |
| Համակարգիչ (ներառյալ նոթբուք) | 33% | 20% | 23% |

Աղբյուր՝ SS հարցում

Բնակարանային և կոմունալ պայմաններ

Թեղուտում բնակելի տների քանակը (ներառյալ չբնակեցված տները) 174-ն է՝ 16,854 քմ ընդամենը մակերեսով, իսկ Շնողում՝ դրանց քանակը 801-ն է՝ 48,477 քմ ընդամենը մակերեսով: 2010-2012թթ. երկու համայնքներում էլ բնակելի տների քանակը և ընդամենը բնակֆոնդի չափը չի փոփոխվել: 2012թ.-ին մեկ բնակչի հաշվով բնակմակերեսը Թեղուտում կազմել է 21.3 քմ, իսկ Շնողում՝ 14.7 քմ:

Աղյուսակ 4.18. Համայնքների բնակֆոնդ, 2012թ.

| Բնակֆոնդ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|--|--------|--------|----------------------|
| Համայնքի բնակելի տների քանակ (ներառյալ չբնակեցված տները) | 174 | 801 | 975 |
| Համայնքի բնակֆոնդի ընդամենը չափ (քմ) | 16,854 | 48,477 | 65,331 |
| Բնակմակերես մեկ բնակչի հաշվով (քմ) | 21.3 | 14.7 | 16 |

Աղբյուր՝ գյուղապետարաններ

Թեղուտում բնակելի տները գազաֆիկացված չեն, իսկ Շնողում՝ գազաֆիկացված է տների շուրջ երկու երրորդը (Աղյուսակ 4.19): 2 համայնքներում էլ բնակելի տներն ամբողջությամբ էլեկտրաֆիկացված են, սակայն էլ. մատակարարման ցանցը մաշված է: Եվ Թեղուտում, և Շնողում ջրամատակարարվող տների կշիռը կազմում է 90%¹: Համայնքներում բնակելի տների կոյուղու համակարգ չկա: Եվ Թեղուտում, և Շնողում կա հանրային հեռախոսագիծ, սակայն SS մեծամասնությունը դրանցից չի օգտվում:

Աղյուսակ 4.19. Համայնքների գազաֆիկացված, էլեկտրաֆիկացված և ջրամատակարարվող տների քանակ, 2012թ.

| Քանակ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|------------------------------|--------|------|----------------------|
| Գազաֆիկացված բնակելի տներ | - | 650 | 650 |
| Էլեկտրաֆիկացված բնակելի տներ | 174 | 891 | 1,065 |
| Ջրամատակարարվող բնակելի տներ | 157 | 720 | 877 |

Աղբյուր՝ գյուղապետարաններ

Վառելիքի աղբյուրներ

Ուտելիքի պատրաստման համար վառելիքի հիմնական աղբյուրը Շնողում բնական գազն է (հարցված SS 80.8%-ի շրջանում), իսկ Թեղուտում՝ փայտը (SS 62%-ի շրջանում), որին հաջորդում է հեղուկ գազը (SS 27.6%-ի շրջանում): Սա պայմանավորված է Թեղուտի գազաֆիկացման բացակայությամբ:

Աղյուսակ 4.20. Ուտելիքի պատրաստման համար վառելիքի հիմնական աղբյուրներ, SS կշիռ ըստ համայնքների, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Վառելիքի հիմնական աղբյուր | Թեղուտ | Շնող |
|---------------------------|--------|-------|
| Բնական գազ | 3.4% | 80.8% |
| Հեղուկ գազ | 27.6% | 3% |
| Էլեկտրաէներգիա | 7.6% | 4% |
| Փայտ | 62.1% | 12.6% |

Աղբյուր՝ SS հարցում

Ջեռուցման նպատակով 2 համայնքներում էլ գործածվող հիմնական վառելիքը փայտն է (SS 91.7%-ի շրջանում՝ Թեղուտում և 95%-ի շրջանում՝ Շնողում):

Աղյուսակ 4.21. Ջեռուցման համար վառելիքի հիմնական աղբյուրներ, SS կշիռ ըստ համայնքների, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Վառելիքի հիմնական աղբյուր | Թեղուտ | Շնող |
|---------------------------|--------|------|
| Բնական գազ | 1.4% | 4% |
| Հեղուկ գազ | 0.7% | - |

¹ Համայնքների ջրամատակարարման և ջրի որակի մասին տեղեկատվություն տրված է «Ջրի և օդի որակ և ֆիզիկական ազդեցության աղբյուրները» բաժնում:

| <i>Վառելիքի հիմնական աղբյուր</i> | Թեղուտ | Շնող |
|----------------------------------|---------------|-------------|
| Էլեկտրաէներգիա | 1.4% | 0.4% |
| Էլեկտրաէներգիա | - | 0.2% |
| Փայտ | 91.7% | 95% |

Աղբյուր՝ SS հարցում

Խմելու ջրի աղբյուրներ

Եվ Թեղուտում, և Շնողում խմելու ջրի հիմնական աղբյուրը տանից դուրս գտնվող ջրի աղբյուրներն են (համապատասխանաբար SS 77.2%-ի և 64.3%-ի համար, Աղյուսակ 4.22): Սրան հաջորդում է Ներտնային ջրամատակարարումը, որն ավելի բարձր կշիռ ունի Շնողում՝ SS 33.9%-ի շրջանում՝ համեմատած SS 20.7%-ի շրջանում Թեղուտում:

Աղյուսակ 4.22. Խմելու ջրի հիմնական աղբյուրներ, SS կշիռ ըստ համայնքների, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| <i>Խմելու ջրի հիմնական աղբյուրներ</i> | Թեղուտ | Շնող |
|---------------------------------------|---------------|-------------|
| Ջրի աղբյուր (տանից դուրս գտնվող) | 77.2% | 64.3% |
| Ներտնային ջրամատակարարում | 20.7% | 33.9% |
| Գնվող շաղցված ջուր | - | 0.2% |
| Ջրիոր կամ ամբար | - | 1.2% |

Աղբյուր՝ SS հարցում

Տան վերանորոգման կարիք

Երկու համայնքներում էլ հարցված SS մեծամասնության շրջանում բնակելի տներն ունեն կապիտալ վերանորոգման կարիք՝ 71% Թեղուտում և 80% Շնողում: Վերանորոգման որևէ կարիք չունեն տների ընդամենը 5%-ը երկու համայնքներում էլ:

Աղյուսակ 4.23. Վերանորոգման կարիք ունեցող բնակելի տներ, SS կշիռ ըստ համայնքների, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| <i>Վերանորոգման կարիք</i> | Թեղուտ | Շնող |
|------------------------------------|---------------|-------------|
| Կապիտալ | 71% | 80% |
| Կոսմետիկ | 23% | 15% |
| Վերանորոգման կարիքի բացակայություն | 5% | 5% |

Աղբյուր՝ SS հարցում

Բջջային կապ և ինտերնետ¹

Հարցված SS շրջանում բջջային հեռախոս չեն գործածում SS 2.8%-ը՝ թեղուտում և 4.4%-ը՝ Շնողում: Տանն ինտերնետ առկա է կամ ինտերնետից օգտվում են (ոչ բջջային հեռախոսով) SS 39%-ը՝ թեղուտում և 25%-ը՝ Շնողում: Թեղուտում և Շնողում SS համապատասխանաբար ևս 15%-ը և 13%-ը ինտերնետից օգտվում են բջջային հեռախոսի միջոցով:

Ավտոմեքենայի առկայություն

Սեփական ավտոմեքենա ունի թեղուտի և Շնողի հարցված տնային տնտեսությունների համապատասխանաբար 48.9%-ը և 44.1%-ը, ընդ որում 2 ավտոմեքենա ունի թեղուտի SS 4.1%-ը և Շնողի SS 3.6%-ը (Աղյուսակ 4.24): Վերջին 3 տարիների ընթացքում է ձեռք բերվել թեղուտում ավտոմեքենաների 38%-ը և 26%-ը՝ Շնողում:

Աղյուսակ 4.24. Սեփական ավտոմեքենայի առկայություն, SS կշիռ ըստ համայնքների, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| <i>Ավտոմեքենայի քանակ</i> | Թեղուտ | Շնող |
|---------------------------|---------------|-------------|
| Առկա չէ | 51.1% | 55.7% |
| 1 | 44.8% | 40.5% |
| 2 | 4.1% | 3.6% |

Աղբյուր՝ SS հարցում

Ընդհանուր կենսամակարդակ

Եվ թեղուտում, և Շնողում հարցված տնային տնտեսությունների մեծամասնությունն իրենց ընդհանուր կենսամակարդակը միջին են համարում (համապատասխանաբար՝ SS 68.3%-ը և 61.4%-ը): Իրենց աղքատ են համարում թեղուտի SS 4.8%-ը (7 SS) և SS 11%-ը՝ Շնողում (55 SS):

Աղյուսակ 4.25. SS կենսամակարդակի ինքանզնահատական, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| <i>Կենսամակարդակ</i> | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|----------------------|---------------|-------------|-----------------------------|
| Վատ (աղքատ) | 4.8% | 11.0% | 9.6% |
| Միջինից վատ | 17.9% | 22.5% | 21.5% |
| Միջին | 68.3% | 61.4% | 63% |
| Միջինից լավ | 7.6% | 4.2% | 5% |
| Լավ (հարուստ) | 1.4% | 0.8% | 0.9% |

Աղբյուր՝ SS հարցում

¹ Աղբյուր՝ SS հարցում

5. Կրթություն

Բնակչության կրթական մակարդակ

Եվ թեղուտում, և Շնողում 25 տարեկանից բարձր բնակչության կրթական մակարդակը նույնանման բաշխում ունի. բարձրագույն, նախամասնագիտական, միջին մասնագիտական կամ թերի բարձրագույն կրթություն ունեցող բնակչության կշիռը կազմում է մոտ 40%:

Աղյուսակ 5.1. Համայնքների 25 տարեկանից բարձր բնակչության կրթական մակարդակ, 2013թ. մարտ-ապրիլ դրությամբ

| Կրթական մակարդակ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|---|--------|------|----------------------|
| <i>25 տարեկան և բարձր բնակիչների կշիռ</i> | | | |
| Դպրոցական (տարրական, հիմնական կամ միջնակարգ) | 60% | 62% | 61% |
| Նախամասնագիտական, միջին մասնագիտական կամ թերի բարձրագույն | 20% | 19% | 19% |
| Բարձրագույն | 20% | 21% | 20% |

Աղբյուր՝ ՏՏ հարցում

Նախադպրոցական կրթություն

Թեղուտ և Շնող համայնքներում յուրաքանչյուրում գործում է մեկ մանկապարտեզ: Թեղուտի մանկապարտեզը հիմնովին նոր է՝ կառուցված 2011թ.-ին: 2010-2012թթ. մանկապարտեզ հաճախող երեխաների թվաքանակը Շնողում աճել է 7-ով՝ հասնելով 72-ի, իսկ Թեղուտում նվազել է 2-ով՝ դառնալով 22: 2012թ.-ին Թեղուտի մանկապարտեզում առկա տեղերի զբաղվածությունը կազմել է 55% (60%՝ 2010թ.-ին), իսկ Շնողի մանկապարտեզում՝ 60% (54%՝ 2010թ.-ին):

Աղյուսակ 5.2. Համայնքների մանկապարտեզների տեղերի և հաճախող երեխաների քանակ, 2012թ.

| Քանակ | Թեղուտ | Շնող |
|------------------------------|--------|------|
| Մանկապարտեզի տեղեր | 40 | 120 |
| Մանկապարտեզ հաճախող երեխաներ | 22 | 72 |

Աղբյուր՝ համայնքների մանկապարտեզներ

Դպրոցական կրթություն

Համայնքներից յուրաքանչյուրում կա մեկ դպրոց: Շնողի դպրոցն ունի մեկդարյա պատմություն, հիմնանորոգվել է 2005թ.-ին: Եվ Շնողում, և Թեղուտում դպրոցահասակ բոլոր երեխաները հաճախում են դպրոց: 2010-2012թթ. աշակերտների թվաքանակը Շնողում ավելացել է 10-ով, իսկ Թեղուտում՝ նվազել 1-ով: 2012թ.-ին Շնողի 33 շրջանավարտներից 16-ը եղել են աղջիկ, իսկ Թեղուտի 9 շրջանավարտներից՝ 5-ը:

Աղյուսակ 5.3. Համայնքների դպրոցների աշակերտների և շրջանավարտների քանակ, 2012թ.

| <i>Քանակ</i> | Թեղուտ | Շնող |
|-----------------------|---------------|-------------|
| Աշակերտներ (ընդամենը) | 66 | 342 |
| Շրջանավարտներ | 9 | 33 |

Աղբյուր՝ համայնքների դպրոցներ

Դպրոցների կարիքներ

Ըստ Թեղուտի դպրոցի տնօրինության՝ դպրոցն ունի հետևյալ կարիքները՝ կահույք, լաբորատոր բնագիտական գույք (քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, աշխարհագրություն առարկաների համար), սպորտային և արհեստանոցային գույք, նոր համակարգիչներ (դպրոցը ներկայումս ունի 11 սարքին համակարգիչ, որոնց կեսն է ինտերնետին միացված) և հակահրդեհային միջոցներ: Ըստ Շնողի դպրոցի տնօրինության՝ դպրոցի հիմնական կարիքը նոր համակարգիչներն են (դպրոցը ներկայումս ունի 11 սարքին համակարգիչ, որոնք ինտերնետին միացված չեն):

Հետդպրոցական կրթություն

2012թ.-ին բուհ է ընդունվել Շնողի դպրոցի շրջանավարտների 36%-ը (12 հոգի, որոնցից 7-ը՝ աղջիկ, Աղյուսակ 5.4)՝ հիմնականում մանկավարժության ուղղությամբ (7 հոգի), ինչպես նաև իրավագիտության (1 հոգի), լեզվաբանության (1 հոգի) և բնագիտական ուղղություններով (2 հոգի): Շրջանավարտներն ընդունվել են հիմնականում պետական բուհեր՝ Երևանում (Երևանի պետական համալսարան, Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան) և Վանաձորում (Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ): Նույն ժամանակահատվածում Թեղուտի դպրոցի շրջանավարտներից բուհ ընդունվողներ չեն եղել:

2012թ.-ին նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ (ՆՄՄՈՒՀ) են ընդունվել Շնողի դպրոցի շրջանավարտների 21%-ը՝ 7 հոգի (որոնցից 3-ը՝ աղջիկ) արհեստագործություն, գեղանկարչություն, համակարգչային ծրագրավորում և բժշկություն ուղղություններով: Վերոնշյալ ՆՄՄՈՒՀ-երը գտնվում են հիմնականում տարածաշրջանում՝ Ալավերդու արհեստագործական ուսումնարան, Եվրոպական քոլեջի Ալավերդու մասնաճյուղ, Վանաձորի պետական բժշկական քոլեջ, ինչպես նաև Երևանում:

Նույն ժամանակահատվածում Թեղուտի դպրոցի շրջանավարտներից ՆՄՄՈՒՀ են ընդունվել շրջանավարտների 44%-ը (4 հոգի, որոնցից 3-ը՝ աղջիկ)՝ հումանիտար, տեխնիկական և բնագիտական ուղղություններով: Վերոնշյալ ՆՄՄՈՒՀ-ներն են՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի հենակետային վարժարանը, Ալավերդու պետական քոլեջը, Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջը, Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջը:

Աղյուսակ 5.4. Համայնքների դպրոցների շրջանավարտներից բուհ և ՆՄՄՈՒՀ ընդունվածների քանակ, 2012թ.

| <i>Քանակ</i> | Թեղուտ | Շնող |
|--|---------------|-------------|
| Բուհ ընդունվածներ | - | 12 |
| Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունվածներ | 4 | 7 |

Աղբյուր՝ համայնքների դպրոցներ

Հետդպրոցական կրթության և կարիերայի պլաններ¹

Աշակերտներ

Եվ Թեղուտում, և Շնողում դպրոցականների հետագա կրթություն ստանալու ծրագրերը բավական տարածված են: Հարցված SS շրջանում Թեղուտի և Շնողի 15 տարեկանից բարձր աշակերտների համապատասխանաբար 87%-ը և 73%-ը բուհ ընդունվելու ծրագրեր ունեն: Յուրաքանչյուր համայնքում վերոնշյալ աշակերտների ևս 9%-ը ծրագրում են ստանալ նախնական կամ միջին մասնագիտական կրթություն: Թեղուտի աշակերտների բարձրագույն կրթության նախընտրած ոլորտները տնտեսագիտությունը և հանքագործությունն են (յուրաքանչյուրը՝ 31%), իսկ Շնողի աշակերտների պարագայում՝ տնտեսագիտությունն ու հասարակական գիտությունները² (յուրաքանչյուրը՝ 28%): Հետդպրոցական կրթությունը շարունակել չցանկացող աշակերտների պարագայում 2 համայնքներում էլ գերակա պատճառը վճարունակության հետ կապված խնդիրներն են՝ 83% Թեղուտում և 77% Շնողում:

Ուսանողներ

Հարցված SS շրջանում ներկայումս բուհերում սովորող Թեղուտից ուսանողների 64%-ը պլանավորում է վերադառնալ հայրենի գյուղ և աշխատել «Թեղուտ» ՓԲԸ-ում: Շնողից «Թեղուտ» ՓԲԸ-ում աշխատել ցանկացող ուսանողների կշիռը կազմում է 29%, իսկ 35%-ը ցանկանում է աշխատել Երևանում:

¹ Աղբյուր՝ SS հարցում:

² Չի ներառում իրավագիտությունը և մանկավարժությունը:

6. Մշակույթ, սպորտ, հանգիստ և ժամանց

Մշակույթ

Համայնքերում մշակութային կյանքն ակտիվությամբ առանձնապես աչքի չի ընկնում: Եվ թեղուտում, և Շնողում գործում է մշակույթի տուն, Շնողում կա նաև արվեստի դպրոց: Շնողում գործում է եկեղեցի, իսկ թեղուտում՝ մատուռ: Թեղուտում են գտնվում նաև 13-րդ դարի Մանաստեֆի մենաստանը, 10-17րդ դարերի եկեղեցիներ, Վարդան գորավար կոթողը: Համայնքներում հայտնաբերվել են 3,500-4,500 տարեկան պատմական գերեզմաններ:

Սպորտ

Համայնքներում սպորտային խմբակներ չեն գործում և սպորտով զբաղվելու հնարավորություններ քիչ կան: Համայնքներից սակավաթիվ մանուկներ և պատանիներ հաճախում են Ալավերդիում գործող մի քանի խմբակներ (օրինակ՝ արևելյան մարտաձևեր):

Թեղուտում ակտիվորեն սպորտով են զբաղվում բնակիչներ տնային տնտեսությունների 16%-ից (30 հոգի), իսկ Շնողում՝ SS 9%-ից (55 հոգի)¹: Թեղուտից սպորտով զբաղվողների շրջանում ամենատարածված սպորտաձևերն են ֆուտբոլը և բասկետբոլը (յուրաքանչյուրը՝ հարցվածների 71%-ը), իսկ Շնողից սպորտով զբաղվողների շրջանում տարածված են ըմբշամարտը և արևելյան մարտաձևերը (համապատասխանաբար 75% և 73%):

Հանգիստ և ժամանց²

Եվ թեղուտում, և Շնողում, ըստ հարցված SS բացարձակ մեծամասնության (94%՝ թեղուտում և 93%՝ Շնողում)՝ ընտանիքի անդամները հանգստի և արձակուրդի առանձնահատուկ պրակտիկա չունեն և հիմնականում գյուղում են անցկացնում իրենց և հանգիստը, և արձակուրդը: Վերջին 3 տարիներին արտերկրում հանգստացել է հարցված SS 21 բնակիչ թեղուտից (հարցված SS բնակիչների 3.3%) և 51-ը՝ Շնողից (հարցված SS բնակիչների 2.5%):

Մշակույթի, սպորտի, հանգստի և ժամանցի ցանկություններ

Սեփական և մերձակա համայնքներում սպորտի, մշակույթի, հանգստի և ժամանցի հնարավորությունների շարքում և թեղուտի և Շնողի բնակիչները ամենաշատը նախընտրում են ունենալ երգի կամ պարի խմբեր և սպորտային ակումբներ (թեղուտում բնակիչների համապատասխանաբար 72%-ը և 60%-ը, իսկ Շնողում՝ 44%-ը և 52%-ը, տե՛ս Աղյուսակ 6.1): Երկու համայնքներում էլ հաջորդ ամենատարածված ցանկությունը լողավազանի առկայությունն է (թեղուտում՝ բնակիչների 45%-ը, Շնողում՝ 42%-ը):

¹ Աղբյուր՝ SS հարցում:

² Աղբյուր՝ SS հարցում:

Աղյուսակ 6.1. Համայնքների բնակիչների մշակույթի, սպորտի, հանգստի և ժամանցի ցանկություններ, ՏՏ կշիռ, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| <i>Սպորտի, ժամանցի և հանգստի հնարավորություններ</i> | Թեղուտ | Շնող |
|---|---------------|-------------|
| Երգի կամ պարի խմբեր | 72% | 44% |
| Սպորտային ակումբներ | 60% | 52% |
| Լողավազան | 45% | 42% |
| Երեխաների համար խաղահրապարակ | 37% | 40% |
| Մանկական ժամանցի կենտրոն | 34% | 23% |
| Վերանորոգված մարզադաշտ | 33% | 34% |
| Նոր սրճարան, կարակե, բար կամ ռեստորան | 30% | 28% |

Աղբյուր՝ ՏՏ հարցում

7. Տրանսպորտ

Ուղևորափոխադրումներ

Թեղուտի և Շնողի և տարածաշրջանի մերձակա հիմնական խոշոր բնակավայրերի (մասնավորապես՝ Ալավերդի և Վանաձոր), ինչպես նաև Երևանի միջև իրականացվում են կանոնավոր ուղևորափոխադրումներ: Համայնքներին սպասարկում են մարդատար և երթուղային տաքսիներ, միկրոավտոբուսներ և ավտոբուս¹:

Դեպի Ալավերդի և հակառակ ուղղությամբ ուղևորափոխադրումներն իրականացնում են երթուղային տաքսիների միջոցով՝ օրը 3 անգամ և ավտոբուսի միջոցով՝ օրը մեկ անգամ: Համայնքների և Վանաձորի միջև երկկողմանի ուղևորափոխադրումն իրականացվում է օրը մեկ անգամ միկրոավտոբուսով: Գործում է նաև ուղևորափոխադրում դեպի Երևան (վերադարձով) օրը մեկ անգամ՝ միկրոավտոբուսով: Հասարակական տրանսպորտի վերոնշյալ կանոնավոր երթուղիներից բացի ուղևորափոխադրումներ են իրականացնում նաև տեղական մի քանի տաքսիներ:

Ճանապարհատրանսպորտային պատահարներ²

2010-2012թթ. Շնողում գրանցվել է 2 (մեկական 2010 և 2012 թվականներին), իսկ Թեղուտում՝ 1 (2010թ.) ճանապարհատրանսպորտային պատահար, որոնք մահացու ելք չեն ունեցել: Նույն ժամանակահատվածում ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով վիրավորների թիվը Շնողում կազմել է 2, իսկ Թեղուտում՝ 1 մարդ:

Բավարարվածություն համայնքները սպասարկող հասարակական տրանսպորտից

Երկու համայնքներում էլ հարցված ՏՏ մեծամասնությունը ամբողջապես կամ հիմնականում բավարարված է իրենց համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի երթուղիների առկայությունից, տրանսպորտի հաճախականությունից և գնից:

Աղյուսակ 7.1. Բավարարվածություն համայնքները սպասարկող հասարակական տրանսպորտից, ՏՏ կշիռ, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| Ամբողջապես կամ հիմնականում բավարարված ՏՏ կշիռ | Թեղուտ | Շնող |
|---|--------|------|
| Երթուղիների առկայություն (ուղղություններ) | 57% | 63% |
| Տրանսպորտի հաճախականություն | 55% | 62% |
| Գին | 63% | 60% |

Նշում. ՏՏ բավարարվածությունը գնահատված է 1-5 սանդղակով, 1=ամբողջապես բավարարված, 5=ամբողջապես դժգոհ Աղբյուր՝ ՏՏ հարցում

¹ Համայնքների բնակիչների սեփական ավտոփոխադրամիջոցների մասին տեղեկատվությունը ներկայացված է «Կյանքի որակ» բաժնում:

² Աղբյուր՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն:

8. Հանցավորության մակարդակ

Հանցագործությունների քանակ

Գրանցված ընդամենը հանցագործությունների քանակը թեղուտում 2010-2012թթ. աճել է 2-ից մինչև 6, իսկ Շնողում՝ 4-ից 7: Նշված ժամանակահատվածում թեղուտում և Շնողում ծանր հանցագործություններ չեն գրանցվել:

Աղյուսակ 8.1. Համայնքներում գրանցված հանցագործությունների քանակ, 2012թ.

| Քանակ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|--|----------|----------|----------------------|
| Գողություն | 1 | - | 1 |
| ճանապարհատրանսպորտային պատահարներ ¹ | - | 1 | 1 |
| Այլ | 5 | 6 | 11 |
| Ընդամենը | 6 | 7 | 13 |

Աղբյուր՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն

Հանցագործություն կատարած անձանց սեռատարիքային բացվածք

2010-2012թթ. անչափահասների և կանանց կողմից կատարված հանցագործություններ չեն արձանագրվել: 2010թ. համեմատ 2012թ.-ին հանցագործություն կատարած անձանց քանակը թեղուտում աճել է 2-ից մինչև 6, իսկ Շնողում՝ 4-ից 7: 2012թ.-ին Շնողի բնակիչներից հանցագործություն կատարած անձինք պատկանել են 30-49 և 50-ից բարձր տարիքային խմբերին, իսկ թեղուտի բնակիչներից հանցագործություն կատարածները՝ հիմնականում 30-49 տարիքային խմբին:

Աղյուսակ 8.2. Թեղուտ և Շնող համայնքներից հանցագործություն կատարած անձանց քանակ ըստ տարիքային բաշխման, 2012թ.

| Տարիքային խումբ | Թեղուտ | Շնող | Թեղուտ և Շնող միասին |
|----------------------------|----------|----------|----------------------|
| <i>Հանցագործների քանակ</i> | | | |
| 18-29 | 1 | - | 1 |
| 30-49 | 4 | 3 | 7 |
| 50 և բարձր | 1 | 4 | 5 |
| Ընդամենը | 6 | 7 | 13 |

Աղբյուր՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն

¹ Քննարկված է «Տրանսպորտ» բաժնում:

ՄԱՍ II. Առողջապահական հենակետային ցուցանիշներ

9. Առողջապահություն¹

Տեղական առողջապահական հաստատություններ

Շնորհում գործում է Շնողի բժշկական ամբուլատորիան (11 աշխատակից, որոնցից 7-ը մասնագիտական, այդ թվում՝ 2 բժշկուհի), իսկ Թեղուտում՝ բուժկայան (2 մասնագիտական աշխատակից): Վերոնշյալ հաստատությունները սպասարկում են համայնքների բնակիչների առողջապահական համեմատաբար թեթև խնդիրները: Առողջապահական միջին և ծանր կարիքները հիմնականում սպասարկվում են Ալավերդու, մասամբ նաև՝ Նոյեմբերյանի (հիմնականում՝ ծնունդների ընդունումը) հիվանդանոցների կողմից:

Բնակիչների շրջանում տարածված հիվանդություններ²

Անչափահասների շրջանում տարածված հիվանդություններ

Թեղուտ

2012թ.-ին Թեղուտի անչափահաս բնակիչների շրջանում առկա է եղել 160 հիվանդության դեպք (75-ը՝ աղջիկների շրջանում): Գերակշռել են շնչառական օրգանների հիվանդությունները՝ համապատասխանաբար 79% և 76%՝ աղջիկների և տղաների շրջանում: Տարածված այլ հիվանդություններից յուրաքանչյուրի կշիռը ընդամենի մեջ 5%-ից ցածր է եղել և տղաների, և աղջիկների շրջանում:

Աղյուսակ 9.1. Թեղուտի անչափահաս բնակիչների շրջանում տարածված հիվանդություններ ըստ սեռի, 2012թ.

| Հիվանդությունների քանակ | Աղջիկ | Տղա | Ընդամենը |
|---------------------------------------|-----------|-----------|------------|
| Շնչառական օրգանների հիվանդություններ | 59 | 63 | 122 |
| Մաշկի և ենթամաշկի հիվանդություններ | 2 | 4 | 6 |
| Մարսողական օրգանների հիվանդություններ | 2 | 4 | 6 |
| Վարակային հիվանդություններ | 3 | 2 | 5 |
| Այլ | 9 | 10 | 19 |
| Ընդամենը | 75 | 83 | 158 |

Աղբյուր՝ Շնողի բժշկական ամբուլատորիա

Շնող

2012թ.-ին Շնողի անչափահաս բնակիչների շրջանում առկա է եղել 440 հիվանդության դեպք (200-ը՝ աղջիկների շրջանում): Ինչպես Թեղուտում, Շնողում ևս գերակշռել են շնչառական օրգանների հիվանդությունները՝ համապատասխանաբար 70% և 76%՝ աղջիկների և տղաների շրջանում: Դրանց հաջորդում են մաշկի և ենթամաշկի, մարսողական օրգանների և

¹ Հաշվանդամության և մահացության վերաբերյալ տվյալները ներկայացված են «Ժողովրդագրական տեղեկություններ» բաժնում:

² Ներառում է ինչպես առաջին անգամ գրանցված, այնպես էլ նախորդ տարիներին գրանցված և ներկայումս առկա հիվանդությունները:

մակաբուժային հիվանդությունները՝ առկա հիվանդությունների ընդամենը դեպքերի մեջ համապատասխանաբար 7.5%, 7% և 2.7%:

Աղյուսակ 9.2. Շնորհի անչափահաս բնակիչների շրջանում տարածված հիվանդություններ ըստ սեռի, 2012թ.

| Հիվանդությունների քանակ | Աղջիկ | Տղա | Ընդամենը |
|---------------------------------------|------------|------------|------------|
| Շնչառական օրգանների հիվանդություններ | 139 | 183 | 322 |
| Մաշկի և ենթամաշկի հիվանդություններ | 20 | 13 | 33 |
| Մարսողական օրգանների հիվանդություններ | 14 | 17 | 31 |
| Մակաբուժային հիվանդություններ | 6 | 6 | 12 |
| Այլ | 21 | 21 | 42 |
| Ընդամենը | 200 | 240 | 440 |

Աղբյուր՝ Շնորհի բժշկական ամբուլատորիա

Չափահասների շրջանում տարածված հիվանդություններ

Թեղուտ

2012թ.-ին Թեղուտի չափահաս բնակիչների շրջանում առկա է եղել հիվանդության 245 դեպք (116-ը՝ կանանց շրջանում): Կանանց շրջանում գերակշռել են արյան շրջանառության համակարգի (28%), շնչառական օրգանների (22%), միզասեռական համակարգի (12%), ոսկրամկանային համակարգի (10%), մարսողական օրգանների (7%) հիվանդությունները: Տղամարդկանց շրջանում գերակշռել են շնչառական օրգանների (30%), արյան շրջանառության համակարգի (21%), մարսողական օրգանների (11%), ոսկրամկանային համակարգի (10%), մաշկի և ենթամաշկի (6%) հիվանդությունները:

Աղյուսակ 9.3. Թեղուտի չափահաս բնակիչների շրջանում տարածված հիվանդություններ ըստ սեռի, 2012թ.

| Հիվանդությունների քանակ | Կին | Տղամարդ | Ընդամենը |
|--|------------|------------|------------|
| Շնչառական օրգանների հիվանդություններ | 25 | 38 | 63 |
| Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ | 32 | 27 | 59 |
| Ոսկրամկանային համակարգի հիվանդություններ | 11 | 13 | 24 |
| Մարսողական օրգանների հիվանդություններ | 8 | 14 | 22 |
| Միզասեռական համակարգի հիվանդություններ | 14 | 2 | 16 |
| Մաշկի և ենթամաշկի հիվանդություններ | 2 | 8 | 10 |
| Շաքարախտ | 5 | 3 | 8 |
| Այլ | 19 | 24 | 43 |
| Ընդամենը | 116 | 129 | 245 |

Աղբյուր՝ Շնորհի բժշկական ամբուլատորիա

Ճնող

2012թ.-ին Ճնողի չափահաս բնակիչների շրջանում առկա է եղել հիվանդության 1,180 դեպք (609-ը՝ կանանց շրջանում): Կանանց շրջանում գերակշռել են արյան շրջանառության համակարգի (31%), շնչառական օրգանների և ոսկրամկանային համակարգի (յուրաքանչյուրը՝ 15%), միզասեռական համակարգի (8%) հիվանդությունները, շաքարախտը և մարսողական օրգանների հիվանդությունները (յուրաքանչյուրը՝ 6%): Տղամարդկանց շրջանում գերակշռել են շնչառական օրգանների (35%), արյան շրջանառության համակարգի (18%), ոսկրամկանային համակարգի (12%), մարսողական օրգանների և աչքի (յուրաքանչյուրը՝ 7%), մաշկի և ենթամաշկի (6%), նյարդային համակարգի (5%) հիվանդությունները:

Աղյուսակ 9.4. Ճնողի չափահաս բնակիչների շրջանում տարածված հիվանդություններ ըստ սեռի, 2012թ.

| <i>Հիվանդությունների քանակ</i> | Կին | Տղամարդ | Ընդամենը |
|--|------------|----------------|-----------------|
| Ճնչառական օրգանների հիվանդություններ | 94 | 199 | 293 |
| Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ | 188 | 101 | 289 |
| Ոսկրամկանային համակարգի հիվանդություններ | 89 | 67 | 156 |
| Մարսողական օրգանների հիվանդություններ | 30 | 39 | 69 |
| Միզասեռական համակարգի հիվանդություններ | 50 | 16 | 66 |
| Աչքի հիվանդություններ | 18 | 36 | 54 |
| Շաքարախտ | 36 | 13 | 49 |
| Մաշկի և ենթամաշկի հիվանդություններ | 23 | 25 | 48 |
| Այլ | 81 | 75 | 156 |
| Ընդամենը | 609 | 571 | 1,180 |

Աղբյուր՝ Ճնողի բժշկական ամբուլատորիա

Բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդություններ

Անչափահասների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդություններ

Թեղուտ

2012թ.-ին Թեղուտում անչափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների շարքում գերակշռում են շնչառական օրգանների հիվանդությունները՝ 74% և 78%՝ համապատասխանաբար տղաների և աղջիկների շրջանում: Տղաների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների շարքում հաջորդում են մաշկի և ենթամաշկի և մարսողական օրգանների հիվանդությունները (յուրաքանչյուրը՝ 5%) և վարակային հիվանդությունները (3%): Աղջիկների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների շարքում հաջորդում են վարակային (4%), մաշկի և ենթամաշկի, մակաբուժային, մարսողական օրգանների և միզասեռական համակարգի (յուրաքանչյուրը՝ 3%) հիվանդությունները:

2010-2012թթ. Թեղուտում անչափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների քանակը ավելի քան կրկնապատկվել է՝ 72-ից հասնելով 150-ի (աղջիկների

չրջանում 27-ից հասնելով 73-ի, իսկ տղաների շրջանում՝ 45-ից 77-ի): Հիվանդությունների վերոնշյալ աճն ապահովվել է շնչառական օրգանների հիվանդությունների աճի հաշվին (114% աճ տղաների շրջանում, իսկ աղջիկների շրջանում՝ 200%): Այլ հիվանդությունների շարքում առաջին անգամ բացահայտման էական նվազումներ չեն գրանցվել:

Աղյուսակ 9.5. Թեղուտի անչափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդություններ ըստ սեռի, 2012թ.

| <i>Հիվանդությունների քանակ</i> | Աղջիկ | Տղա | Ընդամենը |
|--|--------------|------------|-----------------|
| Շնչառական օրգանների հիվանդություններ | 54 | 60 | 114 |
| Մաշկի և ենթամաշկի հիվանդություններ | 2 | 4 | 6 |
| Մարսողական օրգանների հիվանդություններ | 2 | 4 | 6 |
| Վարակային հիվանդություններ | 3 | 2 | 5 |
| Մակաբուժային հիվանդություններ | 2 | 1 | 3 |
| Միզասեռական համակարգի հիվանդություններ | 2 | - | 2 |
| Այլ | 8 | 6 | 14 |
| Ընդամենը | 73 | 77 | 150 |

Աղբյուր՝ Շնողի բժշկական ամբուլատորիա

Շնող

2012թ.-ին Շնողում անչափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների շարքում ևս գերակշռում են շնչառական օրգանների հիվանդությունները՝ 70% և 77%՝ համապատասխանաբար տղաների և աղջիկների շրջանում (Աղյուսակ 9.6): Տղաների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների շարքում հաջորդում են մարսողական օրգանների (7%), մաշկի և ենթամաշկի (6%), մակաբուժային հիվանդությունները (3%): Աղջիկների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների շարքում հաջորդում են մաշկի և ենթամաշկի (11%), մարսողական օրգանների (6%), մակաբուժային (3%), վարակային (2%) հիվանդությունները:

2010-2012թթ. Շնողում անչափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների քանակն աճել է 20%-ով՝ 350-ից հասնելով 421-ի (աղջիկների շրջանում 143-ից հասնելով 189-ի, իսկ տղաների շրջանում՝ 207-ից 232-ի):

Հիվանդությունների վերոնշյալ աճն ապահովվել է հիմնականում շնչառական օրգանների հիվանդությունների աճի (տղաների շրջանում 35% աճ, իսկ աղջիկների շրջանում՝ 55%) և մասամբ նաև մարսողական օրգանների (տղաների շրջանում 150% աճ) և մաշկի և ենթամաշկի (աղջիկների շրջանում 50% աճ) հիվանդությունների աճի հաշվին: 2012թ.-ին 2010թ. համեմատ և տղամարդկանց, և կանանց շրջանում առաջին անգամ բացահայտման նվազումներ են գրանցվել վարակային և մակաբուժային հիվանդությունների քանակի մեջ (համապատասխանաբար 15-ից 5 և 27-ից 12):

Աղյուսակ 9.6. Ճնողի անչափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունները ըստ սեռի, 2012թ.

| <i>Հիվանդությունների քանակ</i> | Աղջիկ | Տղա | Ընդամենը |
|---------------------------------------|--------------|------------|-----------------|
| Ճնչառական օրգանների հիվանդություններ | 132 | 178 | 310 |
| Մաշկի և ենթամաշկի հիվանդություններ | 20 | 13 | 33 |
| Մարսողական օրգանների հիվանդություններ | 11 | 15 | 26 |
| Վարակային հիվանդություններ | 4 | 1 | 5 |
| Մակաբուժային հիվանդություններ | 6 | 6 | 12 |
| Այլ | 16 | 19 | 35 |
| Ընդամենը | 189 | 232 | 421 |

Աղբյուր՝ Ճնողի բժշկական ամբուլատորիա

Չափահասների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդություններ

Թեղուտ

2012թ.-ին Թեղուտում չափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների շարքում (ինչպես անչափահաս բնակիչների շրջանում) գերակշռում են շնչառական օրգանների հիվանդությունները՝ 34% և 26%՝ համապատասխանաբար տղամարդկանց և կանանց շրջանում (Աղյուսակ 9.7): Տղամարդկանց շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների շարքում հաջորդում են արյան շրջանառության համակարգի և մարսողական օրգանների (յուրաքանչյուրը՝ 13%), ոսկրամկանային համակարգի (10%), մաշկի և ենթամաշկի (6%) հիվանդությունները: Կանանց շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների շարքում հաջորդում են արյան շրջանառության համակարգի (21%), միզասեռական համակարգի (12%), ոսկրամկանային համակարգի (10%), մարսողական օրգանների (5%) հիվանդությունները:

2010-2012թթ. Թեղուտում չափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների քանակը աճել է 10%-ով՝ 183-ից հասնելով 201-ի (կանանց շրջանում 79-ից հասնելով 91-ի, իսկ տղամարդկանց շրջանում՝ 104-ից 110-ի):

Հիվանդությունների վերոնշյալ աճը տղամարդկանց շրջանում ապահովվել է հիմնականում արյան շրջանառության համակարգի (367% աճ) և մաշկի և ենթամաշկի (75%) հիվանդությունների աճի հաշվին: Կանանց շրջանում հիվանդությունների աճը պայմանավորված է հիմնականում արյան շրջանառության համակարգի (138% աճ), միզասեռական համակարգի (83% աճ) և ոսկրամկանային համակարգի (80% աճ) հիվանդությունների աճի հաշվին: 2012թ.-ին 2010թ. համեմատ և տղամարդկանց, և կանանց շրջանում առաջին անգամ բացահայտման նվազումներ են գրանցվել շնչառական օրգանների հիվանդությունների քանակի մեջ (ընդամենը բացահայտման դեպքերի քանակը 72-ից նվազել է 61): 2012թ. համայնքի բնակիչների շրջանում բացահայտվել է շաքարախտի 3 դեպք, մինչդեռ 2010թ.-ին շաքարախտի նոր դեպքեր գրանցված չեն եղել:

Աղյուսակ 9.7. Թեղուտի չափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունները ըստ սեռի, 2012թ.

| <i>Հիվանդությունների քանակ</i> | Կին | Տղամարդ | Ընդամենը |
|--|------------|----------------|-----------------|
| Շնչառական օրգանների հիվանդություններ | 24 | 37 | 61 |
| Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ | 19 | 14 | 33 |
| Ոսկրամկանային համակարգի հիվանդություններ | 9 | 11 | 20 |
| Մաշկի և ենթամաշկի հիվանդություններ | 2 | 7 | 9 |
| Մարսողական օրգանների հիվանդություններ | 5 | 14 | 19 |
| Միզասեռական համակարգի հիվանդություններ | 11 | 2 | 13 |
| Ճաքարախտ | 2 | 1 | 3 |
| Այլ | 19 | 24 | 43 |
| Ընդամենը | 91 | 110 | 201 |

Աղբյուր՝ Շնողի բժշկական ամբուլատորիա

Շնող

2012թ.-ին Շնողում չափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների շարքում (ինչպես և Թեղուտում) գերակշռում են շնչառական օրգանների հիվանդությունները՝ 34% և 21%՝ համապատասխանաբար տղամարդկանց և կանանց շրջանում (Աղյուսակ 9.8): Տղամարդկանց շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների շարքում հաջորդում են արյան շրջանառության համակարգի և ոսկրամկանային համակարգի (յուրաքանչյուրը՝ 12%), աչքի (8%), մարսողական օրգանների, նյարդային համակարգի և մաշկի և ենթամաշկի (յուրաքանչյուրը՝ 6%) հիվանդությունները: Կանանց շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների շարքում հաջորդում են ոսկրամկանային համակարգի (18%), արյան շրջանառության համակարգի (15%), միզասեռական համակարգի (11%), մարսողական օրգանների և մաշկի և ենթամաշկի (յուրաքանչյուրը՝ 6%), նյարդային համակարգի (5%) հիվանդությունները:

2010-2012թթ. Շնողում չափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունների քանակը աճել է 10%-ով (ինչպես և Թեղուտում)՝ 709-ից հասնելով 783-ի (պայմանավորված հիմնականում տղամարդկանց շրջանում աճով՝ 322-ից 390): Տղամարդկանց շրջանում հիվանդությունների վերոնշյալ աճն ապահովվել է հիմնականում նյարդային համակարգի (57% աճ), արյան շրջանառության համակարգի (53% աճ), ոսկրամկանային համակարգի (35% աճ) և շնչառական օրգանների (24% աճ) հիվանդությունների աճի հաշվին: Կանանց շրջանում հիվանդությունների աճը պայմանավորված է հիմնականում ոսկրամկանային համակարգի (59% աճ) և արյան շրջանառության համակարգի (53% աճ) հիվանդությունների աճի հաշվին: 2012թ.-ին 2010թ. համեմատ և տղամարդկանց, և կանանց շրջանում առաջին անգամ բացահայտման նվազումներ են գրանցվել աչքի, մակաբուծային, վարակային հիվանդությունների և բարորակ նորագոյացությունների քանակի մեջ (ընդամենը բացահայտման դեպքերի քանակը նվազել է համապատասխանաբար 55-ից 45, 16-ից 6, 11-ից 5 և 11-ից 6):

Աղյուսակ 9.8. Շնողի չափահաս բնակիչների շրջանում առաջին անգամ բացահայտված հիվանդությունները ըստ սեռի, 2012թ.

| <i>Հիվանդությունների քանակ</i> | Կին | Տղամարդ | Ընդամենը |
|--|------------|----------------|-----------------|
| Շնչառական օրգանների հիվանդություններ | 84 | 133 | 217 |
| Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ | 58 | 46 | 104 |
| Ոսկրամկանային համակարգի հիվանդություններ | 70 | 46 | 116 |
| Մաշկի և ենթամաշկի հիվանդություններ | 22 | 24 | 46 |
| Նյարդային համակարգի հիվանդություններ | 16 | 22 | 38 |
| Մարսողական օրգանների հիվանդություններ | 22 | 25 | 47 |
| Միզասեռական համակարգի հիվանդություններ | 44 | 10 | 54 |
| Աչքի հիվանդություններ | 15 | 30 | 45 |
| Ճաքարախտ | 4 | 3 | 7 |
| Այլ | 58 | 51 | 109 |
| Ընդամենը | 393 | 390 | 783 |

Աղբյուր՝ Շնողի բժշկական ամբուլատորիա

Սոցիալապես կարևոր համաճարակներ

2010-2012թթ. Շնողի բնակիչների շրջանում գրանցվել է թոքախտի 5 դեպք (2-ը 2010թ.-ին և 3-ը 2012թ.-ին, բոլորը տղամարդկանց շրջանում): Նույն ժամանակահատվածում Թեղուտի բնակիչների շրջանում թոքախտի դեպքեր չեն արձանագրվել: Վերոնշյալ ժամանակահատվածում համայնքների բնակիչների շրջանում այլ համաճարակային դեպքեր չեն գրանցվել:

Ընդհանուր նկատառումներ

Ըստ Շնողի բժշկական ամբուլատորիայի՝ 2010-2012թթ. Թեղուտում և Շնողում գրանցված հիվանդությունների (մասնավորապես առաջին անգամ բացահայտված հիվանդությունների) աճին նպաստել են հետևյալ գործոնները՝

1. Բնակիչների ավելի հաճախակի բժշկական ստուգումների ենթարկվելը՝ սեփական նախաձեռնությամբ:
2. «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության հետևանքները, օրինակ՝ կատարվող աշխատանքների հետևանքով փոշու ծավալները և ընկերությունում աշխատող տարածաշրջանի այլ համայնքներից ներգևա աշխատուժի գործոնը, որն իր հետ կարող է բերել նոր վարակներ: Սա մասնավորապես կարող է կարևոր գործոն հանդիսանալ համայնքներում շնչառական օրգանների հիվանդությունների նախորդիվ ներկայացված զգալի աճի համատեքստում:

Բավարարվածություն համայնքներին մատուցվող տեղական առողջապահական ծառայություններից

Երկու համայնքներում էլ հարցված SS մեծամասնությունը ամբողջապես կամ հիմնականում բավարարված է իրենց համայնքներին տեղական առողջապահական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների գնից, ծառայությունների հասանելիությունից և որակից: Բավարարվածությունը համեմատաբար ավելի բարձր է Շնողում (SS 68%-71%), քան Թեղուտում (SS 56%-64%):

Աղյուսակ 9.9. Բավարարվածություն մատուցվող տեղական առողջապահական ծառայություններից, SS կշիռ, 2013թ. մարտ-ապրիլի դրությամբ

| <i>Ամբողջապես կամ հիմնականում բավարարված SS կշիռ</i> | Թեղուտ | Շնող |
|--|---------------|-------------|
| Մատչելիություն (գին) | 56% | 68% |
| Հասանելիություն (ծառայությունների առկայություն) | 57% | 71% |
| Որակ | 64% | 71% |

Նշում. SS բավարարվածությունը գնահատված է 1-5 սանդղակով, 1=ամբողջապես բավարարված, 5=ամբողջապես դժգոհ Աղբյուր՝ SS հարցում

10. Ջրի և օդի որակ, ֆիզիկական ազդեցության աղբյուրներ և աղբի կառավարում

10.1 Խմելու ջրի որակ¹

Եվ Թեղուտի, և Շնողի ներտնային ջրամատակարարման աղբյուրը մոտակա գետերն են, որոնցից վերցված ջուրը չի ֆիլտրվում: «Թեղուտ» ՓԲԸ-ն հայտնել է իր պատրաստակամությունը օժանդակել ապագայում երկու համայնքների համար խմելու խոր ջրագծի կառուցման ծրագրին:

Թեղուտ

Թեղուտ համայնքի ջրամատակարարման համակարգը սնվում է «Տանձուտ» և «Սզնուտ» ստորգետնյա ջրամբարներով: 4 ջրընդունիչ կառույցների սանիտարական պաշտպանության գոտին ապահովված է և հերմետիկության խախտում չկա: Ջրամատակարարման համակարգն ունի երկու օրվա կարգավորող ջրավազաններ, որոնք նույնպես հերմետիկ են և ունեն սանիտարական պաշտպանական գոտի:

2010-2012թթ. կատարվել են ջրի քիմիական, մանրէաբանական, զգայորոշական և ճառագայթաբանական պլանային ուսումնասիրություններ: Ջրի նմուշներում արձանագրված շեղումները հիմնականում մանրէաբանական են, որը հետևանք է չվարակազերծվող ջրամատակարարման համակարգի: 2012թ.-ին շեղումների քանակը կազմել է 7՝ համեմատած 2010թ. 2 դեպքի հետ: Կրկնակի հետազոտությունների արդյունքում պարզվեց մանրէներ չեն հայտնաբերվել:

2010թ. արդյունքներում առկա է քիմիական շեղում կոշտության վերաբերյալ, որը պայմանավորված է կալցիումի և մագնեզիումի աղերի պարունակությամբ:

Աղյուսակ 10.1. Թեղուտ համայնքի խմելու ջրի որակի վերաբերյալ ուսումնասիրությունների քանակ ըստ տեսակների և արդյունքների, 2010-2012թթ.

| | 2010 | 2011 | 2012 |
|--|--------------|------|------|
| | <i>Քանակ</i> | | |
| Ուսումնասիրություններ | | | |
| Քիմիական | 12 | 12 | 10 |
| Մանրէաբանական | 23 | 28 | 17 |
| Չգայորոշական | 23 | 28 | 17 |
| ճառագայթաբանական | 1 | 1 | 1 |
| Ուսումնասիրությունների տեսակներ | | | |
| պլանային | 23 | 28 | 17 |

¹ Թեղուտի հանքավայրի տարածքի մակերևութային ջրերի նմուշարկումները կատարվել են ՀՀ բնապահպանության նախարարության կողմից, ինչպես նաև «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից՝ առանձին (Դուքանաձոր, Խառատանոց և Շնող գյուղերի մերձակայքում): Նմուշարկումների տվյալները ներկայացված են Ուսումնասիրության ընթացքում հավաքագրված հենակետային տվյալների և ցուցանիշների առանձին Excel բազայում:

| | 2010 | 2011 | 2012 |
|--|--------------|------|------|
| | <i>Քանակ</i> | | |
| ոչ պլանային | - | - | - |
| Նորմերին չհամապատասխանելու դեպքեր | | | |
| Քիմիական | 1 | - | - |
| Մանրէաբանական | 2 | 4 | 7 |
| Չգայորոշական ցուցանիշների | - | - | - |
| Ճառագայթաբանական | - | - | - |

Աղբյուր՝ ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ եվ հակահամաճարակային տեսչության Ալավերդու Լոռու արգային կենտրոնի Թումանյանի տարածաշրջանի բաժանմունք

Շնող

Շնող համայնքի խմելու ջրի համակարգը սնվում է «Մանստև» և «Ճճկապատառ» մակերեսային հոսող գետակների ջրերով: Ջրատարները չունեն սանիտարական պաշտպանական գոտիներ: Համակարգն ունի օրվա կարգավորող ջրավազան: Ջուրը բնակչությանը մատակարարվում է առանց նախնական մաքրման և վարակազերծման:

2010-2012թթ. կատարված հետազոտություններով շեղումներ հայտնաբերվել են հետևյալ ցուցանիշներով՝

1. Չգայորոշական՝ գունավորման վերաբերյալ, որն արդյունք է երկրաբանական պայմանների:
2. Քիմիական՝ ամիակային իոնների վերաբերյալ (NH4+), որը կարող է պայմանավորված լինել կենդանի օրգանիզմների կենսագործունեությամբ կամ կենցաղային կեղտաջրերի ներթափանցմամբ:

Հիմնական շեղումները մանրէաբանական են, որոնք 2012թ.-ին 2011թ. համեմատ կտրուկ աճ են արձանագրել՝ 28-ից 51: Կրկնակի հետազոտությունների արդյունքում պաթոգեն մանրէների առկայություն չի արձանագրվել: Շեղումները պայմանավորված են գետակների ջրի նախնական մաքրման և վարակազերծման պրակտիկայի բացակայությամբ: Քիմիական շեղումների դեպքերը 2012թ.-ին եղել են 2, մինչդեռ 2010թ.-ին նման դեպքեր չեն արձանագրվել:

Աղյուսակ 10.2. Շնող համայնքի խմելու ջրի որակի վերաբերյալ ուսումնասիրությունների քանակ ըստ տեսակների և արդյունքների, 2010-2012թթ.

| | 2010 | 2011 | 2012 |
|------------------------------|--------------|------|------|
| | <i>Քանակ</i> | | |
| Ուսումնասիրություններ | | | |
| Քիմիական | 10 | 18 | 23 |
| Մանրէաբանական | 61 | 58 | 59 |
| Չգայորոշական | 61 | 58 | 59 |

| | 2010 | 2011 | 2012 |
|--|--------------|------|------|
| | <i>Քանակ</i> | | |
| ճառագայթաբանական | 1 | 1 | 1 |
| Ուսումնասիրությունների տեսակներ | | | |
| պլանային | 61 | 58 | 59 |
| ոչ պլանային | - | - | - |
| Նորմերին չհամապատասխանելու դեպքեր | | | |
| Քիմիական | - | 1 | 2 |
| Մանրէաբանական | 25 | 28 | 51 |
| Չգայորոշական ցուցանիշների | 1 | 3 | 1 |
| ճառագայթաբանական | - | - | - |

Աղբյուր՝ ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ եվ հակահամաճարակային տեսչության Ալավերդու Լոռու արզային կենտրոնի Թումանյանի տարածաշրջանի բաժանմունք

10.2 Օդի որակ

Ներկայումս Թեղուտ և Շնող համայնքներում Թեղուտի հանքավայրին առնչվող աշխատանքների արդյունքում արտանետվող հիմնական աղտոտող նյութերը անօրգանական են (անօրգանական փոշի): Աղտոտման հիմնական աղբյուրներն են բեռնատար ավտոմեքենաները և խճի ջարդման արտադրամասը: Աղտոտող նյութերի արտանետումների փաստացի չափումների (կատարված «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից) արդյունքները ներկայացված են Ուսումնասիրության ընթացքում հավաքագրված հենակետային տվյալների և ցուցանիշների առանձին Excel բազայում:

10.3 Ֆիզիկական ազդեցության աղբյուրներ

Ֆիզիկական ազդեցության ռադիոչափումներն իրականացվել են Թեղուտի հանքավայրի տարածքում՝ Լցակայանի մակերես, բացահանք, Ֆաբրիկա (շինհրապարակ) կետերում, ինչպես նաև Թեղուտ համայնքում՝ մշակույթի տան դիմաց և Շնող համայնքում՝ գյուղի հրապարակում: Ռադիոչափումները կատարվել են ՈՐԴ-02 և ՇՕՅԿԸ ժամանակակից սարքերի միջոցով, որոնց միջինացված արդյունքները ներկայացված են Աղյուսակ 10.3-ում:

Աղյուսակ 10.3. Հանքավայրի տարածքում և համայնքներում ֆիզիկական ազդեցության ռադիոչափումների արդյունքներ, 2013թ. մայիս

| Չափման կետի անվանումը | γ-ճառագայթներ, մկՉվտ/ժամ | |
|-----------------------|--------------------------|------|
| | մթնոլորտ | հող |
| Լցակայան | 0.05 | 0.09 |
| Բացահանք | 0.07 | 0.12 |
| Ֆաբրիկա | 0.08 | 0.14 |
| Թեղուտ | 0.07 | 0.16 |
| Շնող | 0.05 | 0.11 |

Նշում՝ ռադիոչափումներն իրականացվել են 2013թ. մայիսի 15-ին:
Աղբյուր՝ «Թեղուտ» ՓԲԸ

Արձակված γ -ճառագայթների առավելագույն էքսպոզիցիոն չափաքանակը մթնոլորտում կազմել է 0.08 մկՉվ/ժամ, իսկ հողի մակերեսին՝ 0.16 մկՉվ/ժամ, որոնք փոքր են ֆոնային արժեքից՝ 0.2 մկՉվ/ժամ (20մկՌ/ժամ), իսկ թույլատրելի մակարդակ է համարվում 0.2-0.6 մկՉվ/ժամ:

10.4 Աղբի կառավարում

Համայնքների ՏՏ կենցաղային աղբի կառավարում

Մինչև 2013թ. ապրիլ՝ Թեղուտ և Շնող համայնքները ՏՏ կենցաղային աղբի համակարգված աղբահանություն չեն ունեցել: Բնակիչները իրենք են իրականացնել իրենց ՏՏ աղբահանությունը՝ հիմնականում աղբը հեռացնելով համայնքների մոտակա ոչ բնակելի տարածքներ (օրինակ՝ մերձակա ձորեր):

2013թ. ապրիլից սկսած՝ «Թեղուտ» ՓԲԸ-ն պատրաստակամություն է հայտնել համայնքներին տրամադրելու օժանդակություն կենցաղային աղբահանության կազմակերպման նպատակով:

«Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում առաջացած աղբի կառավարում

«Թեղուտ» ՓԲԸ-ի ներկայիս գործունեության արդյունքում առաջանում է 2 տեսակի աղբ՝ կենցաղային աղբ և արտադրական թափոններ: Կենցաղային աղբը գոյանում է հիմնականում ընկերության վարչական շենքում՝ վարչական գործառնությունների արդյունքում: «Թեղուտ» ՓԲԸ-ն պայմանագրային պայմանավորվածություն ունի Ալավերդու սանիտարական մաքրման ծառայության հետ՝ ընկերության գործունեության արդյունքում առաջացած կենցաղային աղբի աղբահանության վերաբերյալ (շաբաթական պարբերությամբ): «Թեղուտ» ՓԲԸ-ն սույն տարվա մայիսից սկսած նաև Թեղուտ և Շնող համայնքների կենցաղային աղբահանությունն է ընդգրկել Ալավերդու սանիտարական մաքրման ծառայության կողմից իրականացվող աղբահանության շրջանակում:

Ներկայումս «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում առաջացած արտադրական թափոնները չեն ներառում քիմիական կամ ռադիոակտիվ տարրեր: Հանքարդյունաբերական նախապատրաստական գործունեության ընթացքում առաջացած մակաբացման ապարները տեղափոխվում են և կուտակվում այդ նպատակով նախատեսված հատուկ վայր՝ Շնողին մերձակա Դուբանսաձորի տարածք:

Արտադրական այլ թափոնները (ինչպես օրինակ՝ ոչ պիտանի անվադողեր, ավտոմեքենաների յուղեր և այլն), ներկայումս պահվում են ընկերության՝ դրանց համար հատուկ առանձնացված տարածքներում: Հետագայում նախատեսվում է արտադրական թափոնների կրկնակի օգտագործում, վերադարձ մատակարարներին կամ հանձնում թափոններ վերամշակող համապատասխան կազմակերպություններին:

Հավելվածներ

Հավելված I. Մեթոդաբանական մոտեցում

I.1 Առաջնային տվյալների հավաքագրում

Առաջնային տվյալները հավաքագրվել են հետևյալ աղբյուրներից՝

1. Թիրախային համայնքներում SS հարցում
2. Համայնքների առանցքային շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցների և քննարկումների անցկացում

1. Թիրախային համայնքներում SS հարցում

SS հարցումն իրականացվել է թիրախային՝ Թեղուտ և Շնող համայնքներում: Առաջնային տվյալների հավաքագրումը կատարվել է տնային տնտեսությունների դեմ առ դեմ դաշտային հետազոտության միջոցով 2013թ. մարտ-ապրիլ ամիսների ընթացքում: Թիրախային համայնքներում հարցազրույցավարների թիվն այցելել է բոլոր տնային տնտեսություններ՝ փորձ անելով կատարել դեմ առ դեմ հարցում:

Ընդհանուր առմամբ, հարցում է անցկացվել 646 SS շրջանում: Թեղուտի 145 հարցված տնային տնտեսությունները ներառում են 628 բնակիչ, իսկ Շնողի 501 հարցված տնային տնտեսությունները՝ 2,034 բնակիչ: Հարցված SS թվաքանակի կշիռը համայնքների SS ընդամենը թվաքանակի մեջ ներկայացված է ստորև:

Աղյուսակ I.1. Հարցված SS քանակ և կշիռ համայնքներում գրանցված SS ընդամենը քանակի մեջ

| Տնային տնտեսություններ | SS քանակ | % համայնքի SS ընդամենը քանակի մեջ* |
|---|------------|------------------------------------|
| Շնող | | |
| Հարցումը կատարվել է | 501 | 63% |
| Հրաժարվել են հարցումից | 43 | 5% |
| Հարցումը չի կատարվել, քանի որ գյուղում չեն գտնվել (հիմնականում՝ արտագաղթ) | 128 | 16% |
| Հարցումը չի կատարվել այլ պատճառներով | 127 | 16% |
| Համայնքի ընդամենը SS քանակ | 799 | |
| Թեղուտ | | |
| Հարցումը կատարվել է | 145 | 84% |
| Հրաժարվել են հարցումից | 5 | 3% |
| Հարցումը չի կատարվել, քանի որ գյուղում չեն գտնվել (հիմնականում՝ արտագաղթ) | 12 | 7% |
| Հարցումը չի կատարվել այլ պատճառներով | 10 | 6% |
| Համայնքի ընդամենը SS քանակ | 172 | |

*Ներառյալ հարցման պահին համայնքից մշտապես կամ ժամանակավորապես արտագաղթած SS-երը:

2. Համայնքների առանցքային շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցների և քննարկումների անցկացում

Թիրախային համայնքների առանցքային շահագրգիռ կողմերի¹ հետ անց են կացվել անհատական հարցազրույցներ և խմբակային քննարկումներ Ուսումնասիրության տարբեր ոլորտների շուրջ:

I.2 Երկրորդային տվյալների հավաքագրում

Ուսումնասիրության մեջ գործածված երկրորդային տեղեկատվությունը հավաքագրվել է պետական և թիրախային համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններից²: Տվյալների հենակետային տարի է համարվում 2012թ.-ը: Գործածվել են վերջին առնվազն 3 տարվա վիճակագրական տվյալներ (2010-2012թթ.)՝ տվյալների առկայության պարագայում:

¹ Ամբողջական ցանկը տրված է Հավելված II-ում:

² Աղբյուրների ցանկը տրված է Հավելված II-ում:

Հավելված II. Ուսումնասիրության մեջ գործածված տեղեկությունների աղբյուրներ

| |
|---|
| <p>Պետական մարմիններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ բնապահպանության նախարարություն 2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության Ալավերդու բաժին 3. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն 4. Ալավերդու քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմին 5. ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ եվ հակահամաճարակային տեսչության Ալավերդու Լոռու արզային կենտրոնի թումանյանի տարածաշրջանի բաժանմունք |
| <p>Շնող և Թեղուտ համայնքների ինքնակառավարման մարմիններ և տեղական այլ կառույցներ</p> <ol style="list-style-type: none"> 1. Շնող և Թեղուտ համայնքների գյուղապետարաններ 2. Ալավերդու հիվանդանոց 3. Շնողի բժշկական ամբուլատորիա 4. Շնող և Թեղուտ համայնքների դպրոցներ 5. Շնող և Թեղուտ համայնքների մանկապարտեզներ |
| <p>Տեղական այլ շահառուներ</p> <ol style="list-style-type: none"> 1. «Թեղուտ» ՓԲԸ 2. Շնող և Թեղուտ համայնքների համեմատաբար խոշոր անասնապահներ 3. Շնող և Թեղուտ համայնքների մանր բիզնեսներ եւ ծառայություններ մատուցողներ (օրինակ՝ մթերային խանութների սեփականատերեր) 4. Շնող և Թեղուտ համայնքների գյուղական կանանց խորհուրդներ |
| <p>Շնող և Թեղուտ համայնքների տնային տնտեսություններ</p> |

Չավելված III. Համայնքների գյուղական կանանց խորհուրդներ

Շնորհի գյուղական կանանց խորհուրդը (ԳԿԽ) հիմնվել է 2008թ.-ին, իսկ Շնորհի ԳԿԽ-ն՝ 2012թ.-ին: ԳԿԽ-ները ստեղծվել են «Կովկասի բնապահպանական ցանց» հասարակական կազմակերպության (Caucasus Environmental NGO Network) կողմից գերմանական EED կազմակերպության ֆինանսավորմամբ: Գյուղական կանանց խորհուրդը համագործակցում է «Կանաչ արահետ» գյուղատնտեսության աջակցության հասարակական կազմակերպության, «Հայաստան ծառատունկ ծրագրի», Ալավերդու «Օրհուս» կենտրոնի և այլ կազմակերպությունների հետ: Թեղուտի ԳԿԽ-ն ունի 19 անդամ, իսկ Շնորհինը՝ 12: Համայնքների ԳԿԽ-ները լուրջ դոնորային ֆինանսավորում չեն ստանում: Հիմնականում ֆինանսավորում են վարչական ծախսերը: Համայնքներում ԳԿԽ-ները ունեն գրասենյակ, որտեղ առկա են անհրաժեշտ աշխատանքային պայմաններ: Վերջին տարիներին ԳԿԽ-ները համայնքներում կազմակերպել և համակարգել են գորգագործության և ձեռագործության աշխատանքներ, որոնք հետագայում դադարեցվել են ցածր եկամտաբերության պատճառով: Ներկայումս ԳԿԽ-ները կազմակերպում են համայնքներում անտառի բարիքներից մուրաբաների պատրաստում, ԳԿԽ անդամների կարողությունների զարգացմանն ուղղված ուսուցումներ, ինչպես օրինակ՝ անվճար համակարգչային դասընթացների կազմակերպում: